



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Զ Բ Օ Ս Ա Ր Ա Ն

ՄԱՆԱԿԱՑ ԵՐԱՐԱՐԻ ԴՐԱՔԱ.



Հրատարակիչ

Ա. Յ. ՄԱՐԳԱՐԵԱՆ



Ա. ՊԱԼԻՄ

ՄԱՐԳԱՐԵԱՆ ՄԱՍԱՆ

—
1891

ՀԱՅ
283

July 19

283

'2000

ՀՆԹԵՐՑԱՐԱՆ

Կ Ա Մ

ՍԻՐՈՒԵ ԶԲՈՍԱՐԱՆ

ՄԱՆԿԱՆՑ ԵՐԿՐՈՇԴ ԳԻՐՔԸ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Մանկական երգեր, կարճ հատուածներ,
առածներ, առակներ եւ փոքր
պատմովինեցներ :

Ավագանելիութեամբ :
P. 992
Տ. 993
Հ. Պ. Ա. Տ. Ա. Կ. Ի. Զ.

ԳՐԱՎԱՀԱՐ Վ. Յ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Ե. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Կ. ՊՈԼԻՍ ԴՐԱՄԱԿԱՐԵՐԱՆ

—
1892

Է Ւ ԾԱ Յ

Ա Բ Ե Լ Ի Հ Օ Ր Ե Ղ Բ Ո Ր Ա

ՄԻՋԱՑԵԼ ԸԹՍՆՉԱՐ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ

ՍԻՐԱՍՈՒՆ ԶԱԻԿԱՑ

ԱՐՍԵՆԻ, ԱԼԳՐԻԿԻ, ԱՇԽԵՆԻ.

ԱՍՏԳԻՒՆ ԵՒ ԱՐՏԱԽԱԶԴԻ

ՈՐ Ի ԹԵՀՐԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ

Ընթերցանութիւնը՝ մանկանց դիւրին, սփրելի, զքոսալի, հրահանգիչ ընելու դրութիւնը եւ ժամանակին նետ բարեփոխելու պէտքը մեր ուշը գրաւելով՝ ներկայս հրատարակելու ձեռնարկեցին:

Յուսանիք որ մանկավարժք եւ դաստիարակք իրենց օժանդակ պիտի ունենան զայս՝ իւրեանց խնամոցն յանձնուած մատաղ մանկանց միտքը մշակելու եւ սիրո կրթելու, ընդարձակելով ի հարկին ընթերցարանիս կրթական, խրատական եւ գիտական մասերը:

Վ. Ա. Հ Ր Ա. Մ



283-2003

(27327-62)

2 \$-283





Ընթացակար տղան՝ դպրոցէն ելնելէ
վերջն ալ ժամանակ կը գտնայ
կարդալու :



ՂԱՓԵՐՑԱՐԱՆ

Կ.Ա.Մ.

ՍԻՐՈՒՆ ԶԲՈՍԱՐԱՆ



ԴՊՐՈՑԸ Ի՞ՆՉ ԿԸՆԵՆ

Յա կո բին հայ ըը ի ըեն ը սաւ.
տը ղաս , ըզ քեզ եղ բօ ըըդ հետ
դպ ըոց պի տի զը կեմ , ուր պի տի
մը նաք մին չե ե ըե կոյ և ա պա
մի ա սին տուն պի տի գառ նաք :

Յա կոք ու ըա խա ցաւ , բայց
ու զեց որ իւր եղ բօր մէն տե զե-
կա նայ՝ թէ դպ ըո ցը ի՞նչ կը նեն .

ԵՐԲ ԱՐ Հակ տուն դար ձաւ,
Յա կոք ա նոր ձեռ քէն բըռ նե լով
հար ցուց .

—ԵՂԲայր, դպ րո ցը ի՞նչ կը նէք :



ԱՐ Հակ պա տաս խա նեց .
Երբ ես դպ րոց կեր թամ , հոն
կը տես նեմ նա եւ ու ըիշ շատ
տը ղաք ներ : Ա նոնք , ինչ պէս ես ,
Երբ դաս տի ա րա կը տես նեմք , կը
բա րեւ եմք և մեր տե զե րը կը
նըս տիմք , յե տոյ ա զօմք կը նեմք
և քիչ մը վեր ջը դաս առ նել
կըս կը սիմք :

Դպ րո ցին մէջ կը սով ըին ,
կար դալ , գը րել և հաշ ուել :

Եր բե մըն կեր գեմք ու պատ.
կեր կը գը ծեմք :

Դպ ըս ցին մէջ օ ըը եր կու
ան գամ կըզ բօս նումք և զա նա.
զան խա ղե ըով կըզ բա դիմք :

Խա ղե ըը դաս տի ա բա կը
կո ըս շէ :

Զան գա կը խա դի , դա սի
ժա մե ըը մեզ կի մա ցը նէ : Ով
որ դա սե ըը լաւ պատ բաս տէ
և դաս տի ա բա կին հը բա ման
նե ըը լաւ կա տա ըէ , ա մե նուն
սի բե լի կը լի նի և պա տիւ
կըս տա նայ :

Յա կոբ իր եղ բօ ըը ը սած.
նե ըըն ու շա գը ըու թեամք մը .
տիկ ընե լէ վերջ , ոտ քի վը ըոյ
ե լաւ ու ը սաւ .

Եղ բայր , ես ալ վա զը քե զի
հետ դըպ ըոց պի տի գամ , ես
ալ կար դալ կու զեմ սով ըիլ ,
ո ըով հե տեւ հայ ըի կըս ը սաւ
թէ՝ կար դա լը շատ լաւ բան է :

— Աւու ու ըե մըն, վա զը մի ա-
սին եր թամք դպ րոց, ը սաւ
Ար շակ :

Երկ բորդ օ րըն Ար շակ եւ
Յա կոք մի ա սին դպ րոց եր թալ
ըս կը սան :

Յա կոք իր խոս տու մը պա-
հեց և կըր թու ելով, իւր հօ-
րը և ա մե նուն սի ըե վ ե զաւ
Ար շա կին պէս :



ԿՐԹԵԱԼ ՇՆԻԿ

Տե սայ ես
մէկ շը նիկ
Գա ռան պէս
աղ ւո րիկ :

Ի՞նչ փայլուն
ա չիկ ներ
Ու պըզ տիկ
թա թիկ ներ :

Ո՛ր չափ աւ
կըրթ եալ էր
Գի տես , գար
ձեռք պագ նէր :

Կան չեցի
քո վսե կաւ
Սի ըեցի ,
նըս տեցաւ :

Երբ տեսայ
այս շընիկ .
Զար մացայ ,
աղքաղ ըիկ :






ԱՆՔԱՏՆԵՐ

Սի ըուն տը զաս
 Եր բոր տես նաս
 Խեղձ աղ քատ ներ ,
 աչք մի՛ գո ցեր :
 Պէտք է գիտնալ
 թէ թըշ ուառք ալ
 Մեր եղ բարք են ,
 մեղ կա րօտ են :
 Հա գուստ ու տեստ ,
 խեղ ձին պա հեստ ,
 ա նօ թի ին՝
 տո՛ւր հա ցա գին :
 Ով որ խեղ ձեր
 միշտ խը նամէ ,
 Հան գիստ օ ըեր
 ա՛յն կան ցու նէ :

Տուր հինգ վաս րայ,
 Աս տուած կու տայ
 Քեզ հինգ հար իւր,
 օր մի ալ բիւր:
 Ով որ խեղ ձեր
 միշտ վը ռըն տեր,
 Պա տառ մը հաց
 ալ չէ գը տած:
 Ար քայու թեան
 գու ռըն ան գամ,
 Անո զոր մի
 ա ռաջ գոց ուի:
 Գը նա տես նել
 այն ար ցունք ներ,
 Որ կը վա զեն
 խեղ ձին աչ քէն:
 Ա զոր մե ցա՞ր,
 լը սէ ձայնն ալ.
 Քեզ կեանք մաղ թեց,
 Աս տուած լը սեց:
 Սի րուն տը զայ,
 ով որ ըլ լայ
 թէ աղ քատ է,
 անոր օդ նէ:



ՏՈՒՆ

Մեր տունը նոր և գեղեցիկ է : Հայ ըլս նոր շինել տու աւ, որ մնա դիր ներ ե կան օդ նա կան ներով և հաս տատ պատեր հիւսե ցին :

Մեր տունը երեք յարկ, վեց սեն եակ և եր կու մեծ ուր բահ ու նի :

Երեք սան դուզիս և մեկ խոհանոց ու նի, որ մաքուր է :

Մեն եակ ներըն ու նին չորս սա կան պատու հան, պատու հան ներ կան՝ որ վեց ա պա կի ու նին, կան ալ որ չորս ա պա կի :

Ապա կի ները շը ջանա կի մէջ
առ նու ած են :

Սեն եակ ներ րուն պատեր րը
ներ կու ած են :

Սը բա հին առաս տա զին վրայ
նը կար ուած են շատ գեղ զիկ
ծա զիկ ներ :

Տանիքը ծուռ է . վը բան կըդ
մին տըր շար ու ած է՝ տու նին մէջ
ջուր չը վա զելու հա մար .

Տու նին կա բա սի ները նոր են .
պա տին վը բա յի հա յելին կը
փայլի , ես անոր մէջ նա յելով
կը լու խըս կը սան տրեմ . հա .
յել ւոյն շըր ջանա կը ոս կե զօծ
է . պատ կեր ներ րուն շըր ջանակ .
ները սեւ են :

Վա բա գոյր ները ճեր մակ
կը տա ւէ շի նու ած են : Ա թոռ
ները՝ շի նու ած են ըն կու զեն ւոյ
փայ տէ : Կե բա կու բի ա ման
ները՝ կլա յե կուած են : Լաւ
ան կո զին ներ ու վեր մակ ներ
ու նիմք : Հայ բըս շու կայ կեր թայ

և մեր ու տես տը կը հո գայ :
 Մայ րըս ալ տան գոր ծե րը կը կար -
 գա դրէ : Իսկ մենք երբ տուն
 կեր թամք , կու տեմք , կը իս-
 մենք և հան գիստ կը քը նա նամք :

Հայ րըս ու մայ րըս ու րախ
 կը մի նին՝ երբ մենք ի րենց խօս-
 քը մը տիկ կը նեմք :



Մայ րի կըս ը սաւ որ գուք
 եր ջա նիկ էք , աղ քատ նե րը
 մի շե ցէք և ա նոնց ալ օդնե-
 ցէք : Ես իմ մօ րըս խօս քը մը-
 տիկ ըրի և աղ քատ նե րուն հաց
 տը սի , եղ բայ րըս ալ , կա րօտ նե-
 րուն թուղթ ու գը րիչ տու աւ :



ԲԱՐԻ ՏՆԱՅՆ

Բարի տը զայն ա մեն ա ռա ռօտ
 և ե րե կոյ ծուն կի վը ռայ գա լով
 կը սէր հե տեւ եալ ա զօթ քը :
 Հայր մեր որ յեր կի նըս ես ,
 Սուրբ ե զի ցի ա նուն քո :
 Ե կես ցէ ար քա յու թիւն քո ,
 Ե զի ցին կամք քո ,
 Որ պէս յեր կի նըս՝ եւ յերկ րի :
 Զհաց մեր հա նա պա զորդ՝
 Տուր մեզ այս օր .
 Եւ թող մեզ ըզ պար տիս մեր ,
 Որ պէս և մեք թո զումք մե լոց

պար տա պա նաց :
Եւ մի՛ տա նիր
Ըզ մեզ ի փոր ձու թիւն ,
Այլ փըր կեա՛ ըզ մեզ ի չարէ :
Զի քո է ար քա յու թիւն և զօ-
րու թիւն և փառք յա վիտ եա նըս .
ա մէն :

ԱՄԵՆԱՄԵԾ ԱՆԲԱՂԴՈՒԹԻՒՆ

Երբ հողադոր ծը չունի եզ, արօք
Երբէք չեմ ասեր նորա բաղ գաւոր.
Երբ ապ լանք ու փող չունի իսա-
նութ պան,
Նա ալ է ան բաղդ, թշրւ ուառ
բաւա կան.
Բայց Երբ հայ տը զան չ'եր թայ
վար ժա տուն,
Այս է ամենէն մեծ ան բաղ-
դութիւն :

ԴՊՐՈՑ

Գառ նիկ իր հօրը հարցուց .

Հայ ըիկ , կը խընդ ըեմ ,

Ո սէ ինձ , տես նեմ ,

Ին չո՞ւ ա մեն օր

Եղ բայ ըըս Գրի գոր

Կա նուխ կեկ կ'ել լայ ,

Եւ ո՞ւր կ'եր թայ նա .

Ին չո՞ւ մին չե ճաշ

Տու նը չը դառ նար :

Բա րի հայ ըըս պատաս խա նեց .

Աչ քիս լոյս , եղ բայ ըըդ

Ա մեն ա ռա ւօտ

Կա նուխ կեկ դըպ ըոց

Կը վա զէ կ'եր թայ ,

Եւ մին չե ի ճաշ

Այն տեղ կը մը նայ :

Հոն կ'եր թան նոյն պէս

Եւ շատ մա նուկ ներ ,

Նո րա ըն կեր ներ .

Նո քա հոն կ'եր թան

Որ կար դալ սով ըին

Եւ յե տոյ բա րի ,

Խե լոք մարդ լի նին .





ԽԱՓՇԻԿ

ՏԵ՛ս խափ շի կը, որ եղբայրը
իւր կըռնա կըն առած՝ կը տանի
ու ըստ խութեամբ և այս պէս իր
հօրըն ու մօրը կ'օդ նէ, գիտնաւ-
լով որ փոք ըիկ եղբայրըն երբ

մեծ նայ, իւր պարտ քը պի տի ճանչ
նայ և իր մեծե բուն հը նա զանդ
պիտի լի նի :



ԲԱՐԻ ՏՆԱՅՆ

Ա մեն մարդ տես նել կ'ու զէր
Ա րայի տը ղայն, ա մեն ծը նողք
Ե րենց որդ ւոց կ'ը սէ ին :

Տղա՛քը, դի տե ցէք Ա րայի
տը ղուն քա զա քա վա րու թիւնը,
ծնո զա սի րու թիւնը և ե կե զե-
ցա սի րու թիւնը :

Տե սէք, ա մեն մարդ բարի տղայ
կը կո չէ Ա րայի տը ղայն, փոխա-
նակ ա նոր ա նու նը տա լու :

Երբ դուք ևս անոր օրինակին հետեւ իք, ըստ Յովհաննէսի որդւոցը, ես ալ ձեզի պիտի ըսեմ աս կից վեր ջը բարի Աշոտ, բարի Սահակ, բարի Սարգիս. և գիտցած եղիք որ ով որ բարի մինի, ամենուն սիրելի կը լինի:

Անցեալ օր բարի տը զուն հայրը, Արայ, պատմեց թէ՝ իւր որ դին ամեն առաւօտ կանուխ անկողնէն կ'ելնէ, ձեռքերը, երեսները, ակռաները և ականջները կը լուայ:

Գլուխը կը սանտըէ, թաշ կինակովքի թը կը մաքըրէ. կը չանայ որ հագուստները չաղտոտին և մեւան չը թափի իւր վրան։ Գիրքերն ու տետրակներն այն պէս մաքուր կը պահէ որ ամեն մարդ կը զարմանայ։

Բան մը եթէ ու զէ մէ կէ մը. “Եթէ կարելի է շնորհըրեք. կամ խնդրեմ տուեք,, կ'ըսէ, և ի՞նչ որ տան կամ առնէ, “շնորհակալեմ,, կը պատասխանէ։”

Յովհաննես իւր որդ ըոց բարի
տըղուն հօ ըը ը սածնե րը պատ մելք
վերջ, հար ցուցի. Աշո'տ, բա իի տը-
ղայն ձեր գըպ ըոցը կու գայ, ը սէ'
տեսնեմ, գըպ ըոցին մէջ ի՞նչ պէս կը
կենայ, գա սերն ալ լաւ կը պատ-
րաս տէ՞:



— Հայ րիկ, պա տաս խա նեց Ա-
շոտ, բարի տղայն ա մեն առաւօտ
գըպ ըոց կու գայ և դա սե ըուն կ'աշ-
խա տի, աղ մուկ չը հաներ, իւր ըն-
կեր նե ըուն հետ գէշ չը վար ուիր,
իւր դա սե ըը լաւ կը պատ րաս տէ և
շատ ա ղէկ կը կար դայ : Օր մը իրեն
հար ցուցինք թէ ի՞նչ պատ ճա ռաւ-

մենք քեզի պէս չեմք կարող կարդալ :

— Այս պէս պատասխանեց մեզ բարի տղայն . “ չեմ գիտեր թէ դուք ի՞նչ պատճառաւ չեք կը նարինձ պէս կարդալ . բայց ես սա միայն գիտեմ որ երբ դաս տիարակը դաս կու տայ , մեծ ու շագրութեամբ մտիկ կ'ը նեմև առած դասսան մի ջա պէս կը կար դամ և դասսա տու ին ըսածնե ըը կը յիշեմ : ”

Ես և իմ մի քանի ընկեր ներս փոր ձով տեսանք որ բարի տը զունըսածնե ըը ճիշդ էին :

Հայ ըը , Սահակին դառնալով ըսաւ . դու յետոյ պիտի պատմես թէ բարի տղայն ե կեզեցին ի՞նչ պէս կը կենայ :





ԶՈՒԿՆ ՈՒ ԳՈՐՏԸ

Սրտոտ Գորտ մը կ'ենէ լճակեն ,
ցատկելով ցատտկելով կ'երթայի կը
հասնի ծովեղերքը . Հոն կենալով կը
նայի , կը տեսնէ որ արծաթի գունով
ձուկեր , կ'անցնին կը դառնան ծովուն
մէջ . “քեզի կ'ըսեմ , կը պօռայ ձուկե-
րէն մէկուն . կեցիր , կեցիր , մէկտեղ
ճամբորդութիւն ընեմք . ինչ որ ձեռք
ձգեմք , կէսը քեզի կէսը ինծի , ես
ալ քեզի պէս ամեն տեսակ լողալու
կերպը գիտեմ , ծովէն ալ վախ չու-
նիմ . կեցիր ես ալ քովդ գամ ու
մէկտեղ երթամք , :

—Մի՛ աշխատիր կ'ըսէ ձուկը . թէե
բարեկամութիւնը շատ աղեկ բան է ,
բայց լաւ է որ ուրիշի հետ ընես ,
վասն զի երկուքնիս ամենեւին չեմք

կրնար յարմարիլ իրարու, որովհետեւ
դուն անդադար կը կռկռաս, ես ա-
մենեւին ձայն չեմ հաներ :

Երբոր մէկու մը բնութիւնը քու
բնութեանդ հակառակ է, մի՛ կար-
ծեր որ անոր հետ լաւ բարեկամ կը
լինիս :



ԱՌԱԿԱԽՈՐ ԲԱՆ

Գիրքը մէկ ծառ՝ վրան կեռաս .

Երբոր ձեռքդ առնուս կարդաս ,

Միայն տերեւը մի՛ դարձներ .

Նայէ պտղին համը տեսնաս :



ԵՐԿՈՒ ՃԱՄԲՈՐԴՆԵՐ

Երկու ճամբորդներ ձիւնէն ցուր-
տէն փախած , կ'երթան պանդոկ մը
կը մտնեն :

Պանդոկապետն ասոնց համար
լաւ կրակ մը կը վառէ , որպէս զի
տաքնան :

Երկու ճամբորդները տեսնելով
կրակը, կ'ուրախանան և անոնցմէ մէ-
կը կրակին այնչափ կը մօտենայ, որ
այրելուն բան չը մնար, ու կըսկսի
պոռալ, այ, այս ինչ կրակ է, քիչ
մնաց պիտի այրէր զիս :


Իսկ միւս ընկերը չորս հինգ ոտք
հեռուն կեցած, ձեռքերը կ'երկնցնէ-
ու կ'երկնցնէ և չը կրնար տաքնալ,
ձեռքերն և ոտքերը գրեթէ սառած
կը պոռայ, է՛հ, այս ինչ տեսակ կրակ
է, ձիւնէն աւելի կը սառեցնէ զիս :

Պանդոկապետը կը հասնի, եւ
տեսնելով ասոնց վիճակը, խնդալէն
ուժը կը կտրի :

Մէկուն կ'ըսէ . դու քիչ մը հե-
ռու կեցիր որ չայրիս, իսկ միւսին
կ'ըսէ . դու ալ քիչ մը յառաջ եկուր
որ չը սառիս :

Բոնկող եղբարք դուք ազգասէլք,
Փիչ մը հեռու՝ չըլլայ այրիք :

Դուք ալ անհոգ պաղ եղբայրներ,
Փիչ մը առաջ՝ որ չը սառիք :



ՔԱՂԱՔ ՄԸ

Ասիոյ մէջ քաղաք մը կար պա-
րըսպապատ և խիստ ամուր, զոր շի-
նել տուած էր Շամօ անուն մէկը։

Այս քաղաքին դրանը վրայ խո-
չոր գրերով ԸՆԵԼ գրել տրուած էր,
և օրէնք էր որ այս գռնէն ներս ո՛վ
որ մտներ, պէտք էր յանձն առնուր
ընել ինչ գործ որ իրեն յանձնուէր։
Ամեն մարդ անդ լոիկ մնջիկ մին-

չեւ երեկոյ կ'աշխատէր եւ հանգիստ
կ'ապրէր . ոչ մէկը միւսին կը հրամա-
յէր . ամեն մարդ իւր պարտքը և գոր-
ծը գիտէր որք որոշուած էին . հոն
ծոյլերը չէին կրնար ապրիլ և քաղա-
քը թողելով գուրս կ'ենէին . իսո-
սելն կարծես արգիլուած էր :

Օր մը քաղաքապետը մեռնելով
յաջորդը գեռ չընտրուած , քաղաքին
դրանը վրայ գրուած բառին Ն գիրն
Սի կը փոխեն (Նի գլուխն աւրելով)
որ կը լինի ԸՍԵԼ և այն օրէնքն կը ջըն-
ջեն . նոյն օրէն մինչեւ ցայսօր ընողնե-
րուն տեղ ըսողներով կը լեցուի քա-
ղաքը . ամեն մարդ կ'ըսէ եւ ոչ ոք կը
գործէ , եւ աղքատութիւնն կը տիրէ
այն տեղ :

Տղայք , յաջողութեան եւ հա-
րըստութեան գաղտնիքը լուկ մնջիկ
գործելն է :



ԱՆՁՐԵՒ

Անձրեւ, անձրեւ, ե՛կ, արի,
Բուսցո՛ւր ցորեն ու գարի,
Բուսցո՛ւր ծաղիկ, կանանչ խոտ,
Աւլէ՛ փոշի, մաքրէ՛ օդ :

Անձրեւ, անձրեւ, ե՛կ արի,
Գալլդ ամենուս բարի :



ՄԵՂՈՒ

Հա՛, ծաղեցաւ արեգակը,
Հա՛, ծաղկեցաւ մանիշակը,
Մեղուն թողուց իր փեթակը,

Տը՛զ տրզալով, տը՛զ տրզալով :
Մեղուն թռաւ ծաղկէ ծաղիկ,
Մեղր առաւ քաղցըր անուշիկ,
Մոմը տարաւ հոտոտ լուսիկ,

Պըսպըսալով, պըսպըսալով :
Անուշ մեղրը՝ մանր տղոց,
Դեղին մոմը՝ ամեն սրբոց,
Խոկ չարերին՝ կըծու խայթոց .
Կըսըսալով, կըծկըծալով :



ԳԱՐՆԻԿ ԵՒ ՄԱՅՐԸ

Ինչո՞ւ կուլաս , խեղճ գառնիկ :
 -շատ ծեծ կերայ ես , մայրիկ :
 Քեզ ո՞վ ծեծեց , իմ գառնիկ :
 -կախարդ պառաւ մէկ կնիկ :
 Ինչո՞ւ ծեծեց քեզ , գառնիկ :
 -կայի ծառին տակ , մայրիկ :
 Ինչով ծեծեց քեզ , գառնիկ :
 -մէկ մեծ փայտով , իմ մայրիկ :
 Ո՞ւր տեղիդ զարկաւ , իմ գառնիկ :
 -թաթիկներուս , ո՞վ մայրիկ :
 Ի՞նչպէս լացիր դու , գառնիկ :
 -մէ՛ մէ՛ մէ՛ մէ՛ , իմ մայրիկ :



ԱՐՁԱԳԱՆԳ

Տաճատ դեռ չէր գիտեր թէ,
արձագանգն ի՞նչ է։ Օր մը դաշտը
անտառի մը մօտ խաղալու ատեն
պօռաց։

Հօ՛, հօ՛. Եւ նոյն բառերը լը-
սեց քովի անտառին մէջէն, հօ՛, հօ՛.

Տաճատ զարմանալով կրկին պօ-
ռաց։ հօ՛, հօ։ Նորէն նոյն ձայնը
լսեց։ հօ՛, հօ՛։

Այս անգամ Տաճատ կարծե-

Ըով թէ՝ քովի անտառին մէջ տղայ մը
պահութած է, հարցուց .

— Ո՞վ ես .

Անտառին մէջէն իսկոյն նոյն
ձայնը լսուեցաւ :

— Ո՞վ ես .

Այն ատեն Տաճատ բարկանա-
լով կոչեց .

Խե՛նդ .

Նորէն լսուեցաւ . — Խե՛նդ .

Դո՛ւ ես ,

— Դո՛ւ ես :

Գէ՛շ ես .

— Գէ՛շ ես .

Այսպէս շարունակուեցաւ . ինչ
որ Տաճատ կ'ըսէր, նոյն բանը անտա-
ռին մէջէն կը լսէր :

Վերջապէս արձագանգն յաղ-
թեց, որովհետեւ ըլդադրեցաւ պա-
տասխանելէ :

Տաճատ սաստիկ բարկացած, ըս-
կըսաւ անտառին ամեն կողմը վազել և
պահութած տղայն գտնելու աշխատիլ-
բայց ամեն կողմ փնտուելէ վերջ

մէկը չք կրցաւ գտնել :

Տաճատ յուզուած , բարկութե-
նէն աչքերը լեցուած , յոգնութե-
նէն ոտքերը ցաւած , գնաց տունն
եւ իր մօրը գանդատեցաւ որ անպի-
տան տղուն մէկը անտառին մէջ
պահութեր , իրեն նախատական խօս-
քեր ըսեր էր :

Խելացի մայրն անմիջապէս հաս-
կնալով որ տղայն խաբուեր է ար-
ձագանդէն , ըսաւ անոր :

Տղաս , ինքզինքդ կ'ամբաստա-
նես , վասն զի ըսածներդ պարզա-
պէս քու խօսքերուդ արձագանգն
են : Թէ որ անտառին մօտ քաղա-
քավար խօսքեր ըսէիր , նոյն խօս-
քերը պիտի լսէիր : Աշխարհս այս-
պէս է , տղաս , մենք ուրիշներուն
հետ ինչպէս որ վարուիմք , անոնք
ևս մեզ հետ այնպէս կը վարուին ,
այսինքն թէ ուրիշներուն մեզ ցու-
ցուցած վարմունքն մեր անոնց ցու-
ցուցածին արձագանգը կամ անդ-
րադարձութիւնն է :



ԹԻԹԵՌՆ ԵՒ ՄԱՆՈՒԿՆ

ՄԱՆՈՒԿՆ

Ըսէ՛ ինծի ի՞նչ բանով
կ'ապրիս , թիթեռդ իմ սիրուն ,
Ամբողջ օրդ խաղերով
կ'անցունես , չզգաս յոգնութիւն :

ԹԻԹԵՌՆ

Սիրուն կանանչ դաշտին մէջ
կեանք կը վարեմ համարձակ ,
Ծաղկանց բուրմունքն անոյշ
իմ կերակուրս է միակ :

Բայց իմ կեանքս խիստ կարճ է՝
Հազիւ օրուան չափ երկար .
Բարի եղի՛ր ով մանկիկ ,
Խնայէ՛, զիս ձեռք մի՛ տար :



ՎԱՐԴ

Զիս ամենքը կը կոչեն
Ծաղիկներու թագուհի ,
Որովհետեւ իմ ծաղիկս
Սիրուն դոյն ու հոտ ունի :

Թէեւ կանաչ իմ թուփը
Շատերու ձեռք կը ծակէ ,
Բայց այս անմեղ յանցանքը
Ինձ ամեն մարդ կը ներէ .

ԱՌՈՂՋՆ ՈՎ Է

Միհրդատ օր մը իր եղբօրը հարցուց . Եղբայր , մեր ընկերներուն մէջէն ո՞վ առողջ է :

Եղբայրը պատասխանեց . **Առողջ այն է որ ցաւ մը չունի , իւր ձեռքը , գլուխը , ոտքը կրնայ գործածել մեծ դիւրութեամբ , ախորժակ ունի ուտելու եւ համ կ'առնէ , տկար չէ , կը նայ վազել , խաղալ . աշխատիլ , ուրախանալ եւ զուարճանալ :**

Միհրդատ աւելցուց . աղնիւ եղբայրս , ի՞նչ ընելու է որ մարդս առողջ լինի ու մնայ :

Նա ալ պատասխանեց . պէտք է կերակուր ուտել , շարժմունք ընել եւ հանգիստ առնուլ :

Շարժմունքներուն ամենէն լաւն է աշխատութիւնը :

Լաւագոյն հանգիստն է քունը :

Բնաւ բարկանալու չէ , պարապ մտածմունքներով միտքը տանջելու չէ :

Շատ խմելու , շատ ուտելու , շատ վազելու չէ :

Վաղելէ եւ տաքնալէ վերջ, զուր
խմելու չէ :

Քրտնած ատեն վերարկուն հանե-
լու չէ :

Գէշ օդ ծծելու չէ, պաղ առնե-
լու չէ :



ՆԱՊԱՍՏԱԿ

Մի՛ վաղեր այսչափ արագ,
իմ աղւորիկ նաղաստակ,
Շատ փոքրիկ ես տակաւին,
Թաթիկներըդ կը յոգնին :
Մի՛, մի՛ այդպէս վեր ցատկեր,
Արտիկս թունդ մի հաներ :
Նստէ քովիկս՝ սիրունիկ,
Ուր բացուին բիւր ծաղիկ,
Նստէ եւ քեզ հաց բրդեմ,
Շաքարեղէն կերցնըեմ,
Մինչեւ մեծնաս զօրանաս .

Ոստոստելով քովս խաղաս ,
Ապա ծաղկեալ ի մարմանեդ ,
Երթաս թողուս դու զիմ բանտ .



ՅԱՓՐՈՒԿ

Իմ թուփերըս փարթամ չեն
Եւ ոչ ծաղիկս փառաւոր .
Բայց անոյշ հոտըս կ'առնեն
Ամեն մարդիկ հեռաւոր :
Այս պատճառաւ կրնաք դուք
Յափրուկ գտնել ամեն տեղ ,
Փունջերու մէջ պարզ անշռաք
Կամ պարտիզաց մէջ շքեղ :



ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄ ԵՒ ԱՐՁԸ


Երկու բարեկամ միասին կ'երթային.
Ճանապարհին անոնց արջ մը պատահեցաւ, որ զիրենք փարատել կ'սպառնար:

Անոնցմէ մէկը տեսնելով արջին գալը, անմիջապէս ծառը ելաւ իւր ընկերոջը իմաց չտալով. իսկ միւսը անմիջապէս յիշելով թէ՝ արջը մեռեալներուն չվեասեր, գետնի վրայ ընկաւ և մեռելի պէս պառկեցաւ իւր շունչը բռնելով:

Արջը մօտեցաւ, բերանը մարդուն բերնին և ականջներուն վրայ դրաւ և տեսնելով որ շունչ չեներ, մեռած կարծեց և հեռացաւ:

Այն ատեն ծառին վրայ ելնող ընկերը վար իջնելով հարցուց. բարեկամ, արջը ականջէդ ի՞նչ ըստ. ընկերը պատասխանեց. արջը խրատեց զիս որ ինձ բարեկամ չհամարիմ այն մարդը, որուն հաւատարմութիւնը գժբաղդութեան մէջ փորձած չեմ:

Տղայք, ճշմարիտ բարեկամը նեղութեան ժամանակ կը ճանչցուի:



ԳԱՌՆՈՒԿ

Սիրուն , անմեղ իմ գառնուկ .
 Բուրդըդ սպիտակ ու փափուկ .
 Դաշտ վազելով ու արօտ ,
 Մօրդ քաշում ես կարօտ :
 Մի՛ լար , գառնուկ սիրական ,
 Փոքրիկ տըղու դու նման .
 Կուգայ մայրըդ , հետը շատ
 Կը բերէ քեզ անուշ կաթ :

ՓՈՐ ԵՒ ԱՆԴԱՄՔ

Այս քանի մէկ ջանամք յոգնիմք
 Հազար կերպով մենք աշխատիմք ,
 Ու դու միայն դու անկուշտ փոր
 Կըլլես տանիս քու ծոցդ խոր ,
 Մեր պատրաստած կերակուրներն :

Այսպէս ըսին օր մ'անդամներն ,
 Զեռք , ոտք , բերան , աչք կ'ըսէին ,
 Ամենքս եղեր եմք իւր գերին ,
 Իսկ ինքը ծոյլ ծոյլ կը կենայ ,
 Մեզի եւ ոչ մաս մը կուտայ .
 Ասկէ վերջն ալ չեմք աշխատիր ,
 Դու քու գլխուդ ճարը գտիր :
 Այս ըսելով մէկ բերան ,
 Բանէ գործէ ետ կեցան :
 Փորուն խիստ ծոմ բռնել տուին ,
 Բայց ցաւն ընկաւ իրենց վրանին .
 Բոլոր մարմին թառամեցաւ ,
 Ո՛չ ձեռք շարժիլ ո՛չ ոտք կրցաւ :
 Երեսներուն գոյնը նետեց ,
 Աչքերուն լոյսը կաթկթեց :
 Այն ատեն լաւ մը հասկըցան
 Թէ որչափ փորն էր պիտուան ,
 Որ սնունդն նախ ինք քաշելով
 Վերջն ամենուն ծածուկ ճամբով
 Կը դարձընէ կուտայ եղեր ,
 Զէ թէ անգործ ու ծոյլ նստէր :
 Դուք ալ անդամք էք ժողովուրդք ,
 Եւ ստամոքս են վարչութիւնք :



ՃԳՆԱԿՈՐՆ ԵՒ ԱՐՁԸ

Այրի մը մէջ կը բնակեր ճգնաւոր մը , որ ոչ ազգական ունէր եւ ոչ մերձաւոր . անտառին խորը միս մինակ քաշուած կ'ապրէր և տարիներով մարդու երես չէր տեսած :

Խեղճ ճգնաւորը օր մը այս կեանքէն ձանձրացած , կը թողու այրը եւ կ'երթայ մօտակայ անտառին խորը ընկեր մը գտնելու :

Մէկ մ'ալ յանկարծ դէմն արջ մը կ'ելնէ . ուստի վախէն սարսափելով ճգնաւորն՝ ողջոյն տամ քեզ , արջ իմ բարեկամ , կը պօւայ եւ մինչ գետինը կը ծոփի . արջն ալ նոյն բանը

կ'ընէ եւ բարեւն կ'առնու :

Այսպէս սիրով երկուքն ալ նոյն
ատեն իրարու բարեկամ կ'ըլլան եւ¹
կ'երթան լեռներ, ձորեր պտղտիլ:

Յայտնի է որ մարդս արջէն տը-
կար է, ուստի մեր Ճգնաւորն ալ
յոգնեցաւ արջէն առաջ ու սկսաւ
ետ մնալ:

Երբ արջը տեսաւ մարդուն յոգ-
նիլը, եկու քիչ մը պառկէ սա ծա-
ռին տակ. ես քեզի պահապան կը²
կենամ, ըսաւ :

Ճգնաւորն ալ խիստ յոգնած,
հնազանդելու ալ սովորած, երկնցուց
ոտքերը ու պառկեցաւ խոտերուն վը-
րայ. արջուկն ալ քովիկը նստաւ.
ասդիէն անդիէն յանկարծ ճանձ մը
եկաւ տըզտըզալով եւ Ճգնաւորին
քթին վրայ կեցաւ :

Արջուկն այս որ տեսաւ աչքերը
բանալէն թաթովը մէկդի քշեց որ
երթայ. ճանձն թըռ ըրաւ փախաւ
ու նորէն թուչելով իջաւ մարդուն
քթին վրայ նստաւ. այն ատեն ար-

ջը ելաւ . Երկու թաթով խոշոր քար
մը առաւ , եւ եկաւ մարդուն քով
կամացուկ մը կեցաւ :

Ըստ մտքէն “կեցի՛ր, կեցի՛ր ան-
զգամ , ես քու հախէդ հիմա կուգամ :”

Ճանձն՝ որ կարծես կը հակառա-
կէր արջին , տը՛զ ըրաւ փախաւ եւ
կրկին եկաւ ճգնաւորին ճակատին
վրայ նստաւ :

Արջն ալ բոլոր ուժովը տա՛խ ըրաւ
ճեռքի խոշոր քարովը ճգնաւորին ճա-
կատին զարկաւ ճանձը սպաննելու
համար :

Ճանձը տը՛զ ըրաւ փախաւ , ճրդ-
նաւորին հոգին ելաւ :

Մարդիկ կան որ իրենց բարեկա-
մաց աղեկութիւն ընել կ'ուզեն , բայց
իրենց անխելքութեամբ բարիք ըրած
ատեն չարիք կը հասցնեն :

Պէտք է միշտ զգոյշ լինիլ ան-
խելք բարեկամներէ , որոնք խելացի
թշնամիէ մը աւելի վտանգաւոր են :





Մ Ա Մ

Գըրպանիս մէջ կայ մի քանի փարայ,
 ինչ ընեմ. ինձ բարի խրատ ո՞վ տայ:
 Գընէ՛ տանձ, խնձոր, յունաթ կամ փշատ
 Փող ունեցողին, գնելու բան շա՛տ . . .
 Զէ՛. ձեր տուածը չէ՛ խրատ բարի,
 Այդ կը վայելէ մի շատակերի . . .
 Երբ իմ մայրիկս կը տանի զիս ժամ,
 Գրպանիս փարան մոմերու կուտամ,
 Մոմերն կը վառեմ Սուրբերու դիմաց,
 Զոհիս կը հաճի բարեգութ Աստուած,
 Կուտայ ծնողացս Նա առողջութիւն,
 ինձ ալ սէր ուսման եւ յաջողութիւն .
 Տղա՛քներ, շատ շատ վառեցէք մոմեր,
 Մոմով կը շինուին Հայու դպրոցներ:



ԲԱՐԻ ՏՆԱՅՆ

Սահակ իւր հօրը՝ Յովհաննէսին
ըսաւ. հայրիկ, ես բարի տղուն օ-
րինակին կը հետեւիմ, ես ալ անոր
պէս ամեն առաւօտ եկեղեցի կ'եր-
թամ. անոր պէս գլուխս կը բանամ
և երբեմն դպիրներուն հետ կ'երգեմ.
Եկեղեցւոյ մէջ ընկերոջս հետ
չեմ խօսիր :

Զեր գործոց համար յաջողու-
թիւն կը խնդրեմ Աստուծմէ :

Սուրբ պատարագի աւարտմանէն
յետոյ գուրս կ'ելնեմ եկեղեցիէն եւ
մեծերուս ձեռքը կը համբուրեմ.

Ապրիս, տղաս, բարի Սահակս,
պատմէ տեսնեմ անցեալ օր երբ

զքեղ Արայի տունը տարի, այնտեղ
կերակուրները ի՞նչպէս կերաւ նա:

— Բարի տղայն, սեղանին առջեց
կայնեցաւ, երեսը խաչակիքեց եւ
բարձր ձայնով “Հայր մեր, աղօթքը ը-
սաւ, յետոյ նստեցաւ եւ ինչ կերա-
կուր որ պնակը դրին՝ այն կերաւ:

Ապուրը գգալով խմեց, պատա-
ռաքաղով կերակուրները քիչ քիչ
բերանը դրաւ եւ ծամելէ ու կլնելէ
վերջը “քիչ մը ջուր շնորհ ըրէք”
ըսաւ եւ ձեռքերը, բերանը թաց ջըն-
ջոցով սրբելէ վերջ, խմեց զայն:

Պտուղները՝ դանակով ստրկելէ
յետոյ կերաւ:

ԵՐԵՔ ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐ

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն.

Գէորգ մօրը մէկ պատուէրը կա-
տարելու համար աղօրիք կ'երթար:

Ճամբան անօթի եւ հիւանդու-
ծերունի մը տեսաւ:

Գէորգ ծերունիին թշուառու-

թիւնը տեսնելով գթաց եւ հնարք մը
կը փնտռէր մխիթարելու . — “ մեղք
որ նախաճաշիկիս հացը հատցուցի „
կ’ըսէր մտքէն :

Խեղճ ծերունիին բան մը չը կարե-
նալ ընելուն վրայ բոլորովին վշտացած՝
յարգական բարեւ մը տուաւ անոր
ակնածութեամբ :

— “Աստուած օրհնէ՛ քեզ , տղա՛ս,
որ կը պատուես ծերութիւնը , ըսաւ
հիւանդոտ ծերունին :

Գէորգ Ճամբան շարունակեց ու-
րախութեամբ տեսնելով որ իւր քա-
ղաքավարութիւնը ծերունիին հաճոյք
պատճառած էր :

ԵՐԿՐՈՒԴ

Գէորգ երբ աղօրիք հասաւ , տե-
սաւ որ հաւ մը մացառի մը տակէն
դուրս կ’ելնէր :

Մացառին մօտենալով , տեսաւ որ
տերեմներուն տակ ուժ հաւկիթներ
կային :

Իսկոյն Գէորգ աղօրիքը մտաւ ,
ողջունեց աղօրեպանուհին , իւր յանձ-

Նարարութիւնը կատարելէն վերջ ըստ — “Տիկին, այժմ տեսայ որ ձեր հաւերէն մին ութ հաւկիթ ածած է սա մացառներէն մէկուն մէջ „ :



Գերդ տարաւ աղօրեպանուհին նոյն մացառին մօտ եւ հաւկիթները ցուցուց . Տիկինը իւր կորսնցնելիք հաւկիթները գտնելուն վրայ խիստ գոհ՝ փուռէն հանեց կարկանդակ մը, և անոր տալով ըստ .

“Տղաս, ա՛ռ այս՝ քու մարդասիւ-
րութեանդ փոխարէն,, :

ԵՐԵՐԾՈՒԹ

Ազօրեապանուհիին տուած կար-
կանդակը անանկ աղւոր կը հոտէր,
որ Գէորգ կը փափաքէր անմիջապէս
ուտել:

Բայց յանկարծ միտքը եկաւ ճամ-
բան պատահած խեղճ ծերունին եւ
սկսաւ մտքէն ըսել — «Անիկայ մինչեւ
հիմա բան մը ճաշած չէ, որչա՞փ ա-
ղէկ կը լինի եթէ այս աղւոր կար-
կանդակը անոր տամ»:

Քայլերը մեծցուց, վաղել սկսաւ
որպէս զի անոր հասնի։ Քիչ մը վեր-
ջը հիւանդ ծերունիին հասած էր,
կարկանդակը ձեռքը։

Ծերունին տղուն բարերարու-
թենէն յուզուած, անոր շնորհակալ
լինելու ատեն, աչքերն լեցուեցան։

Այսպէս մէկ ժամուան մէջ, քա-
ղաքավար, մարդասէր եւ ողորմած լի-
նելու միջոցը գտած էր։



ԹԷՏՔ Է ԻՐԱՐՈՒ ՕԳՆԵՄՔ

Միհրան, որ մը իր դասը պատրաստած ատեն, զբքին մէջ բառերու պատահեցաւ, զորս լաւ արտասանելը շատ գժուար կ'երեւէր, այնպէս որ քիչ մնաց լար :

Իւր լնկերը, Մաժակ, որ անոր պէս դասը կը սերտէր, Միհրանին վիճակը տեսնելով ըսաւ . — “ մտիկ ըրէ՛ ինձ, եղբայր, եթէ կ'ուզես, կրնամ դասդ սովորեցնել քեզ, որովհետեւ ես դասս բաւական պատրաստած եմ ,»

Եւ երկուքն ալ դասերնին սերտել սկսան եւ Միհրանի գժուար եւ ըեւցած բառերն ինքն կրկին կրկին արտասանելով, լաւ մը վարժեցուց անոր :

Մաժակ իր ընկերոջ յառաջադիմութեան հոգ տարած ատեն, ինքն ալ շատ յառաջացաւ :

Դաստիարակը՝ այս երկու տղայոց իրենց դասը շուտ և ազէկ սովորած լինենուն վրայ զարմանալով, դիտեց այս երկու տղաքներն և տեսաւ որ երկուքը մէկտեղ դասերնին կը պատրաստեն իրարու օդնելով. այն ատեն գովեց իր աշակերտաց առջեւ, ըսելով.

— Տղաքս, շարունակեցէք այսողէս եւ գիտցէք որ մարդ մը ուրիշներուն օդնելով իրեն կ'օդնէ :





ԵՐԿՈՒ ԳԻՒՂԱՑԻ ԸՆԿԵՐՆԵՐ

Թաղոս ու Մարկոս երկու գիւղացի ընկերներ մէկտեղ ելան Ճանապարհ՝ օտար քաղաք մը երթալով դրամ շահելու :

Քաղաքն իրենց դիւղէն շատ հեռու էր, բայց Ճանապարհը շատ կարճ կ'երեւէր, որովհետեւ շարունակ կը քալէին եւ կարծես չէին յոդներ :

Ի՞նչ լաւ բան է մէկ սիրտ մէկ հոգի լինել, ըստ մէկը միւսին, ա-

ուաւօտէ մինչեւ հիմա շարունակ կը
քալեմք եւ կարծես թէ նոր տունէն
դուռս ելեր եմք :

Միութեան, եւ սիրոյ վրայ ինչ
որ մին կը խօսէր զմայլմամբ, միւս ըն-
կերը աւելի եռանդեամբ կը կրկնէր :

Քիչ մը վերջը անծանօթ գիւղ
մը հասան եւ գիւղապետին տունը ա-
ռաջնորդուեցան՝ գիշերն այն տեղ
անցունելու համար :

Գիւղապետը սիրով ընդունեց
այս երկու գիւղացիները եւ ուղեց
հասկնալ թէ իւր հիւրերը ի՞նչ տե-
սակ անձինք են :

Ուստի՝ գաղտնի հարցուց թա-
գոսին — ընկերդ ո՞վ է, լա՞ւ մարդ է :

— Մի՛ հարցներ, ըստ թաղոս,
իշուն մէկն է :

Գիւղապետն զարմանալով թա-
գոսի պատասխանին վրայ, նոյնպէս
գաղտնի հարցուց Մարկոսին թէ՝
ո՞վ է բարեկամ ընկերդ :

— Մի՛ հարցներ, շանը մէկն է :

Գիւղապետը ծանրաքայլ, պատ-

րաստել տուաւ սեղանը, հրամցուց
հիւրերը եւ երկու լեցուն պնակ քե-
րաւ . մին ոսկոր լեցուած՝ թադոսին
եւ միւսն խոտ լեցուած՝ Մարկոսին
առջին գնելով հրամեցէ՛ք, հրա-
մեցէ՛ք ըսաւ :

Թադոս ու Մարկոս իրարու ե-
րես նայեցան եւ գարձան գիւղապե-
տին ըսին . քեզ վայելե՞ց այսպիսի
բան մը ընել մեզ :

Է՛հ, ինչո՞ւ համար, պատաս-
խանեց գիւղապետը . իրարու համար
ձեր ինձ տուած վկայութեան համա-
ձայն պատրաստեցի ձեր կերակուրները:

Որչա՛փ մարդիկ կան, այս տգէտ
գիւղացւոց նման, որ զիրար պարսա-
ւելով, իրարու գէշ վկայութիւններ
տալով, կը կարծեն թէ իրենք աւելի
մեծ պատիւ մը կ'ստանան օտարներէն:





ՊԱՐՏԵԶ

Մենք պարտէզ մը ունիմք ,
Հոն կայ պէս պէս ծաղիկ .
Վարդն է գեղեցիկ ,
Այն ի՞նչ հոտ , անուշիկ :

Պտղատու շատ ծառեր ,
Հայրըս ինքն է տնկեր .
Ուր գարնան մէջ ծաղկին ,
Պտուղ տան ամառին :

Վարդի պէս կարմրցած ,
Նուռ , խնձոր ու կեռաս .
Ամենուն համն անուշ ,
Մոռցանիք տանձ , սալոր , նուշ :
Կիրակի մը այգի ,

Հօրս ըսի զիս տանի .
Երբ հասնին խաղողներ ,
Այն հարուստ ողկոյզներ :

Հայրըս ինծի ըսաւ թէ ,
Կարգալըդ լաւ սովորէ .
Որ օգնես միշտ ինծի ,
Այս է պարտք որդեկի :

Ամեն օր խելօք եմ ,
Համարըս լաւ սերտեմ .
Կ'աշխատիմ ու դրեմ ,
Կեանքն այս է լաւ գիտեմ .



ՈՐՆ Է ԼԱԻ ՏՂԱՆ

Ո՞րն է լաւ տղան ,
Ում պատիւ կուտան .
Եւ սիրեն զանի ,
Իբրեւ պիտանի :

Այն տղայն միայն ,
Որ պարկեցտութեան ,
Պատկեր մ'է սիրուն ,
Հաճոյ ամենուն :

Այն տղան միայն ,
Որ աշխատութեան
Ժամերն անդադար ,
Կ'աշխատի յօժար :

Այն տղան միայն ,
Յետ աշխատութեան ,
Դաշտ պարտէզ կ'երթայ ,
Պարէ կը խայտայ :

Այն է լաւ տղան ,
Ում պատիւ կուտան .
Եւ սիրեն զանի ,
Իբրեւ պիտանի :



ՇԱՔԱՐԻ ԿՏՈՐ ՄԸ

Սաթինիկ վեց տարեկան էր եւ շաքարը
շատ կը սիրէր :

Օր մը իր մայրը զինքն առաւ եւ պտըտելու
տարաւ :

Սաթինիկ ձեռքն ունէր փոքրիկ դամբիւղ մը
որոյ մէջ կար շաքարի կտոր մը

Երբ ճամբէն կ'երթային , տեսան որ կոյր աղ-
քատ մը քարին վրայ նստած էր :

«Մայրիկ , ըսաւ Սաթինիկ , այս խեղճ կոյրին
բան մը տալ կ'ուզէի» :

Մայրն , որ հարուստ ու բարեսիրտ կին մ'էր ,
Հինգնոց մը տուաւ Սաթինիկին որ աղքատին տայ
եւ գոհ լինի :

Աղքատը երբ Սաթինիկի ոտքին ձայնը լսեց
որ իրեն կուգար , բարձր ձայնով ըսաւ .

— «Աղջիկս, Աստուած օրհնէ եւ պահէ դքեզ,
որ խնծի պէս խեղճ աղքատին ողորմութիւն կու-
տաս» :

Սաթինիկ իր մօրը քով դարձաւ եւ անոր
հարցուց .

«Ի՞նչ ըսել կ'ուզէ այս աղքատը»:

— Աղջիկս, կարծեց թէ իրօք դու ես ողոր-
մութիւն տուողը :

— Ի՞նչ ըսել է ողորմութիւն :

— Երբ աղքատին օդնելու համար ունեցա-
ծէդ բան մը տաս, ողորմութիւն տուած կը լի-
նիս» :

Սաթինիկ մտածելով կ'երթար իւր մօրը հետ.
յանկարծ Սաթինիկ ետ դարձաւ եւ աղքատին
կողմն վաղեց եւ շաքարին կտորն անոր տալով.

«Բարի մարդ, ըստ, երբ մեծնամք եւ ըս-
տակ ունենամ, քեզի պիտի տամ, բայց հիմա
պղտիկ եմ, մինակ այս շաքարի կտորը ունիմ,
այն ալ քեզի կուտամք որովհետեւ խեղճ ես» :

Աղքատը խնդաց քթին տակէն, սրտանց ա-
զօթեց որ Աստուած անոր երկար օրեր տայ եւ
երջանիկ ընէ :





ԶԱՊԷԼ ԵՒ ՏԱՆ ՄԵԾ ՇՈՒՆԸ

Զապէլ և եղբարքը իրենց ծնողաց հետ ըզբառավայր մը գացած էին, ուր տեղէն կ'անցնէր տարեւոր ծառերու մէջէն կլկլացող առուակ մը : Զապէլի հայրն ու մայրն առուակէն հեռու գեղեցիկ մարդագետնին վրայ գորդ մը փուելով նստան և իրենց որդւոց ալ հրաման ըրին որ իրենց մօտ խաղան :

Արշակ և Լեւոն, Զապէլի եղբայրները մեծ ուրախութեան մէջ էին, բայց չէին ուզեր որ փոքրիկ քոյրերնին եւս իրենց հետ խաղայ . Զապէլ ալ չէր ուզեր բաժնուիլ անոնցմէ :

Սակայն փոքրիկ աղջիկը երբ տեսաւ որ իրեն եղբայրներն չեն հաճիր որ իրենց հետ խաղայ, ինքն՝ իւր պէպէին առաւ եւ ծառի մը տակ նստելով սկսաւ առանձին զրօննուլ :

Արշակ եւ Լեւոն գոհ էին որ իրենց քոյլը
ծառի մը տակ նստած՝ ինքնին կը զուարճանար
եւ իրենք անհոգ կերպով կը խաղային:

Զապէլ ծարաւած լինելով, կարծեց թէ պէ-
պէին ալ ջուր կ'ուզէ, ուստի կամաց մը առուակին
եղերքը երթալով, ծռեցաւ որ ջուր խմբնէ անոր,
բայց ի՞նչ դժբաղդութիւն, այնչափ ծռեցաւ որ
ոտքն սահելով առուակին մէջ ինկաւ. իրենց տան
մեծ շունը՝ որ փոքրիկ Զապէլէն չէր զատուեր,
զայս տեսնելով, ջուրը նետուեցաւ եւ անոր հան-
գերձներէն խածնելով եղերքը քաշեց, եւ սկսաւ
հաշել: Զապէլ վախէն մարած, աչքերը չէր բաց-
ուեր. իսկ Արշակ եւ Լեւոն խաղալէն յոդնած՝ ծա-
ռին տակ եկան հանգչելու. բայց զարմացմամբ
տեսան որ իրենց քոյլը հոն չէր. սկսան փըն-
տըռել, եւ շունին ձայնը լսելով դէպի անոր կողմը
վաղեցին. տղայոց այս շփոթութենէն ծնողքն ալ
իրար անցած՝ անոնց ետեւէն դացին. եւ ի՞նչ
տեսնեն, Զապէլ մարած, ոտքերը ջուրին մէջ,
կիսամեռ պառկած էր:

Ամենն ալ տխուր էին, Արշակ եւ Լեւոն ի-
րենց յանցաւոր ըլլալն դդացին եւ դդացին. իսկ
հայրը ու մայրը պէտք եղած դարմանը ընելով,
իրենց աղջիկն վտանգէն աղատեցին:

Զապէլ, այսօր բարի աղջիկ մը եղած, իրենց
ծնողաց կ'օգնէ, տանը ծառայութիւնները ընե-
լով եւ անոնց հրամանաւը շարժելով:

Ցղայք, պէտք է որ իրենց ընկերներն կամ
եղբարքը, առանձին չժողուն որ եւ է պարա-
գայի մէջ, եւ միշտ իրարու հետ սիրով վարուին
իրենց ծնողաց հնաղանդ ըլլալով։



ՓՈՔՐԻԿ ԱՂՋԻԿԸ ԵՒ ՊԶՏԻԿ ԿԱՏՈՒՆ

Ժամանակաւ պղտիկ աղջիկ մը պարտիղին
մէջ նստած էր. պարտիղին դրանը մօտ շատ սի-
րուն պղտիկ կատու մը կար։

Փոքրիկ աղջիկը պղտիկ կատուն կանչեց
«Մինէ, Մինէ, եկու, Մինէ» ըսելով։

Մինէն եկաւ փոքրիկ աղջկան քով, անոր հետ
խաղաց, քծնեցաւ, մու, մու, մու, ընելով։

Փոքրիկ աղջիկը դոհ էր Մինէին հետ խաղա-
լէն եւ զանի կը շոյէր։

Իրարու բարեկամ էին այն ժամանակ եւ զի-
րար կը սիրէին։

Բայց փոքրիկ աղջիկը չարացաւ եւ փոքրիկ
կատուին պոչէն քաշեց։

Այն ատեն Մինէ բարկանալով մէյ մ'ալ

մու, մու, չըսաւ, բայց փիֆ, փիֆ ընելով ճանկեց փոքրիկ աղջկան ձեռքը:

Այլ եւս բարեկամ չէին եւ զիրար չէին սիրեր:

Պղտիկ կատուն ալ չուզեց խաղալ փոքրիկ աղջկան հետ եւ թողուց գնաց:

Փոքրիկ աղջիկն ալ միայնակ մնաց:

Չարերը բնաւ բարեկամ չունին:



Ս Ի Մ Ե Ռ Ն Ի Կ

Մարտն անցաւ, հասաւ ապրիլ գեղեցիկ,
Հեռու աշխարհքէ եկաւ ծիծեռնիկ,

Բարով դուն եկար, գարնան կարապետ,
Բոյն շինողներուն ամենէն վարպետ:


Կըռունկը թըռաւ, դնաց վերեւէն,

Սոխակն ալ փախաւ մեր պարտէղներէն,

Մէկ դու մնացիր ճնճղուկներու հետ,

Մի՛րուն ծիծեռնիկ, գարնան կարապետ:

Պատուհանիս մօտ շինէ քու բոյնը ,
Անուշ ճռուողով երգէ դարունը ,
Ածէ՛ ձու , հանէ՛ գեղեցիկ ձագեր ,
Մնացիր մեր մօտ մինչեւ Սեպտեմբեր :



ԲՈՅՆԸ

Բարձր ծխանի մը վրայ թռչուններու բոյն
մը կար , որոյ մէջ ալ չորս պղտիկ հաւկիթներ :
Այս փոքրիկ հաւկիթներն բացուեր էին եւ անոնց
մէջէն չորս հատ անփետուր թռչնիկներ ելեր էին :

Բայց մայրը փետուրներ ունէր , եւ թռչնիկ-
ներն իր թեւերուն տակը կը տաքցունէր :

Եւ երբ մայրը զանոնք կը տաքցունէր ,
Հայրը կ'երթար անոնց կերակուր բերելու :

Յետոյ երբ թռչնիկները մեծցան , փետուրնին
բուսաւ , մայրիկն ալ ելաւ հայրիկն օդնելու որ
միասին կերակուր վնտուեն :

Բայց թոշնիկներուն թեւերը գեռ պղտիկ էին.
չէին կընար թոփլ, անոր համար մայրիկն ըսաւ
անոնց, քուի, քուի, քուի, որ ըսել է « իմ զաւակ-
ներս, իմ փոքրիկ սիրականներս, տունէն մ'ել-
նէք, այսինքն ձեր բոյնէն մի՛ հեռանաք » :

Բայց երբոր մայրիկը թռաւ գնաց, թոշնիկ-
ներէն մէկը հնազանդութիւն չըրաւ, բոյնէն
դուրս ենել ուղեց, մինչեւ ծայրը հասաւ :

Ա՛յս, անմեղ թոշնիկ, հիմա վար պիտի իյ-
նայ . . . ահա կ'իյնայ . . . ինկա՛ւ ծխանին մէջ
եւ այրեցաւ :

Եւ երբ հայրն ու մայրը ետ գարձան, բոյնին
մէջ մինակ երեք հատ թոշնիկ գտան :

Եւ այս երեք թոշնիկներն սկսան ճվճըվալ,
եւ ըսել կ'ուղէին թէ «մեր եղբայրը կորաւ, ծլ-
խանին մէջ գլորեցաւ » :

Ոյն ատեն հայր, մայր ու երեք թոշնիկներ
շատ շատ ցաւեցան :

Ինչու որ մէկուն անհնազանդութիւնը բոլոր
ընտանիքին դժբաղդութիւն կը բերէ :





ՅՈՐԵՆԻ ՀԱՍԿԵՐԸ

Փոքրիկ տղայ մ'էր վահան, երբ իր հօրը հետ
դաշտն ելաւ :


Իր հայրը հողագործ էր եւ կը նայէր թէ ցու-
րենները հասունցե՞ր են :

Վահան ըսաւ . հայրիկ, տե՛ս, ցորենի բու-
ներ կան, որ ծռած են եւ կան որ շիփ շիտակ
բարձր կը կենան . կ'երեւի թէ այն բուներն որ շի-
տակ են՝ լաւ հասկեր ունին, իսկ անոնք որ ծռած
են՝ լաւ հասկեր չունին :

Հայրը շուտ մը երկու հասկ կտրեց եւ իր
որդւոյն ըսաւ .

Նայէ, զաւակս, նայէ եւ տե՛ս . այս հասկն
որ համեստութեամբ գլուխ կը ծռէր, ցորենի հա-
տիկներով լեցուն է և ընդհակառակն այն որ գո-
ռոզութեամբ գլուխը կը բարձրացնէր, բոլորովին
պարապ է :

Նոյնպէս անխելք մարդիկներ գոռողութեամբ
կը պարծին եւ բարձր երեւնալ կ'ուզեն. իսկ գի-
տուն մարդիկ համեստութեամբ պարծենալէ
կը զգուշանան :



ԵՐԿՈՒ ՏԱԿԱՌ

Երկու տակառ
Մէկտեղ ելան ճանապարհ .
Մէկը պարապ
Միւսոյն մէջ լի՝ գինի կար :
Սա անխռով
Ինք իր վրայ գլորուելով,
Առաջ կ'երթար
Լոիկ մնջիկ իւր ճամբով .
Իսկ միւսն ըսես ,
Խելք թռուցած խեւի պէս
Յատկըտելով
Կը շառաչէր գեւի պէս .
Անցնող դարձող
Մե՛ծ կըելով սրտադող ,

Մէկդի քաշուած՝
 Հեռուանց էին նկատող .
 Բայց ընդունայն ,
 Զո՞ւր տակառին մեծ էր ձայն ,
 Երբոր չէր նա
 Միւսին պէս լի՝ պատուական :
 Ով իւր բանին վրայ մեծ մեծ կը ջարդէ ,
 Յայտնի է որ նորա գլուխ դատարկ է .
 Մարդու պէս մարդ անո՞ր ըսել կը վայելէ
 Որ միշտ սակաւ խօսի եւ շատ կը գործէ :
 Եւ առանց ձայնի
 Գործն յառաջ կը տանի :



ԱԳՐԱԻԾ ԵՒ ԿՈՒԺԸ

Ագռաւը շատ ծարաւի էր , վաղեց կուժի մը
 քով , որուն մէջէն ջուր խմէ :

Իրաւ կուժին մէջ ջուր կար , բայց այնչափ
 քիչ էր որ , շատ աշխատելէ վերջ հաղիւ կրցաւ
 կտուցին ծայրը ջուրին հասցնել :

«Յուսահատելու չէ» ըսաւ ինքն իրեն . «Ով
 որ կամք ընէ , հնարք մը կը գտնէ» :

Ագռաւը մանր քար մը առաւ , կուժին մէջ
 նետեց , հատ մը եւս , հատ մ'ալ ետեւէն , քարե-

ըր ջուրին տակը կ'երթային, իսկ ջուրը վեր
կ'ելնէր:

Հարկ չեղաւ շատ քար ձգելու, աշխատութիւնը պսակուեցաւ, եւ հանգիստ սկսաւ խմել ջուրը. թէ որ այս խելքը չընէր, ջուրին հասնելիք չունէր:

Շատ անդամ գժուար երեւցած գործ մը կը գիւրանայ աշխատութեան եւ հնարամութեան առջև, ԱՅՆՊԵՍ ԶԷ՞ ՏՂԱՔՍ:



ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Վահան եւ Գէորգ զիրար շատ կը սիրէին եւ միշտ միասին կը պտըտէին:

Օր մը գեղեցիկ ծաղիկներով զարդարուած պարտէղ մը գնացին, որ տեսակ տեսակ եւ դոյնզգոյն ծաղիկներով զարդարուած էր:

Գէորգ ընկերոջը ըստաւ. Վահան, տե՛ս, սա կարմիր վարդը, որ գետնի վրայ եղած գեղին, կապոյտ, սպիտակ, թուխ եւ մանիշակագոյն ծաղիկներուն վրայ հպարտութեամբ կը նայի եւ իր անուշ հոտովը մարդիկ իրեն կը քաշէ:

Է՛հ, պատասխանեց Գէորգ, վարդն իր հոտով եւ տեսքով մարդիկ իրեն կը մօտեցնէ, իսկ

սա միջատներն ալ գետնի ծաղիկներուն վրան
թռչտելով եւ բզզալով ըսել կ'ուզեն թէ՝ գե-
տինը զարդարող ծաղիկներն ալ մի՛ մոռնայք :

Տե՛ս, սա ի՛նչ սիրուն կենդանի մ'է, տե՛ս,
ի՛նչ գեղեցիկ գոյն ունի եւ կը փայլի ոսկւոյ
նման :

Վահան, զայս որ լսեց, մեղուխն ետեւէն վա-
զել սկսաւ եւ ուզեց զայն բռնել:

Մեղուն ծաղկէ ծաղիկ թռչտելէ վերջ յոդ-
նեցաւ եւ վահան ուրախութեամբ բռնեց խեղճ
միջատը՝ որ ծաղկանց հիւթը քաղելու եւ մեղք
շինելու համար մոտած էր պարտիզին մէջ եւ բըշ-
զալով, տղազալով կ'աշխատէր :

Խեղճ մեղուն ջանաց փախչիլ վահանին ձեռ-
քէն եւ տեսնելով որ աղատելիք չունի, իր խայ-
թիչ զէնքն հանեց եւ այնպէս խոցեց վահանին
ձեռքն որ լալով վազեց իւր մօր վրայ եւ մայրն
անմիջապէս ցեխ դնելով խայթուած տեղը,
ձեռքը կապեց եւ հետեւեալ խրատը տուաւ :

Տղաքս, ամեն ոսկեգոյն եւ փայլուն երեւ-
ցած բաներու ետեւէ մի՛ ըլլաք, վասն զի վտան-
գը շատ անդամ իր փայլուն գոյնովը կը հրա-
պուրէ եւ կը վնասէ ձեղ. ուստի լաւ խորհեցէք
առաջ, մանաւանդ ձեղ անծանօթ եղող որ եւ է
առարկայի վրայ, եւ անմիջապէս մի՛ մօտենայք,
հաստատուն եղիք ծանօթին եւ խիստ զգոյշ ան-
ծանօթին. առանց խորհրդի բան մի՛ ընէք, ո-
րովհետեւ կը վնասուիք :



ԵՐԿՈՒ ԱՅԾԵՐ

Ամայի լեռան մը վրայ երկու այծ իրարու դէմ ելան նեղ ճամբու (կապանի) մը վրայ :


Ճանապարհին մէկ կողմը ժայռ էր ահագին բարձրութեամբ, միւս կողմն ալ խորունկ ու խաւար անդունդ էր. ճանապարհն ալ այնչափ նեղ էր, որ ոչ իրարու քովէ կրնային անցնիլ և ոչ ալ երեսնին դարձունել ու ետ երթալ :

Այծերը ի՞նչ ըրին կը կարծէք :

Մին մեծ զգուշութեամբ պառկեցաւ նեղ ճանապարհին վրայ եւ կռնակը ժայռին կրմնցուց, միւսն ալ կամացուկ մը անոր վրայէն քալելով անցաւ անդիի կողմը :

Պառկող այծն ալ պառկած տեղէն ելաւ

կանգնեցաւ ողջ եւ անվսաս , եւ ալ կրնար ու-
զածին պէս ժայռէ ժայռ ցատկել եւ լեռներու
անուշ խոտերը վայելել :



Ուրիշ երկու այծ ալ դաշտը ձգելով՝ լեռն
ի վեր պտըտելու ելեր էին . կ'երթան կ'երթան ,
վազող առուի մը երկու եզերքը իրար կը դըտ-
նեն . ծառ մը ինկած էր առուին վրայ , և կա-
մուրջ դարձեր էր մէկ կողմէն մինչեւ միւս կողմը :

Այծերը իրարու երես նայեցան , եւ իւրա-
քանչիւրը կ'ուզէր որ առաջ ինքն անցնի :

Այծ Պահ մը ոտքերնին ծառին վրայ դրած կե-
ցան եւ երկուքն ալ կը նայէին որ միւսը ետ
քաշուի . բայց երկուքին մէկն ալ ետ չկեցաւ ,
եւ վերջապէս նեղ կամուրջին մէջ տեղը իրարու
դէմ եկան :

Սկսան իրենց եղիւրով զիրար հրել , ու-
այնչափ կուուեցան որ վերջապէս ոտքերնին սա-
հելով՝ երկուքն ալ առուին մէջ ինկան , եւ
ջուրն առաւ տարաւ զանոնք :

Երկուքն ալ կրնային աղատիլ , եթէ ժա-
մանակին մէկը զիջում ընէր :

Տղաքս , պէտք է սովորել ի հարկին զիջում
ընել իրարու :



ԲԱՐԻ ՏՂՈՒՆ

ԱՌԱԽՈՏԵԱՆ ԵՐԳԸ

Քանի՛ սիրտս չնորհակալ
Պարտի լինել Արարչէն ,
Որ զիս աղատ այս գիշեր ալ
Պահեց բոլոր վտանգէն :

Աստուած բարի տղաքները
Միշտ անդադար կը սիրէ :
Եւ իր անբաւ օրհնութիւնը
Անոնց վրայ կը դրկէ :

Բարի տղայն պարտի սիրել
Իրեն քաղցրիկ ծնողքը ,
Եւ շարունակ ի գործ դնել
Անոնց ամեն պատուէրը :

Բարի տղայն պարտի սիրել
Գորովալից իւր Ազգը ,
Անոր համար միշտ նուիրել
Ինչ որ ունի իւր ձեռքը :

Բարի տղայն պարտի սիրել
Իր եղբայրը ու քոյրը ,
Բարիք յաւէտ անոնց ընել
Պիտի լինի իւր իղձը :

Բարի տղայն պարտի սիրել
Բոլոր իւր ընկերները ,
Միշտ շարունակ զանոնք յարդել
Պիտի լինի իւր պարտըլ :

Բարի տղայն լուռ կը կենայ
Ի զուր տեղը չի պոռար .
Իրեն գթուտ ծնողացը
Նեղութիւն բնաւ չը տար :

Բարի տղայն միշտ կը խորհի
Սիրել զԱստուած եւ յարդել
Իր ծնողքն եւ ընկերը ,
Անոնց բարիք միշտ ընել :



ՍԵՐՈՎՔԻ

Սերովքէ երբ գպրոցէն ելաւ, շատ բան չէր գիտեր, անոր համար մեծ գժուարութիւններ քաշեց իւր առեւտուրի գործերուն մէջ. բայց իւր վեհանձն բնութիւնը եւ ազգակցաց վրայ ունեցած սէրը ոչ միայն զինքը խիստ հարուստ ըրէն, այլ եւ մեծ գովեստներու արժանի:

Սերովքէ տասն եւ վեց տարեկան հասակին մէջ գպրոցէն ենելով գործի մտաւ, երբ բաւական դրամ շահեցաւ, լաւագոյն համարեց առանձին գործ մը բռնել, ուստի երբ տեսաւ որ իր հայրենեաց մէջ չպիտի կրնայ հարկ եղած գործին ձեռնարկել, ծնողացն եւ ազգականացն հաւանութեամբ օտար երկիր պանդիտեցաւ:


Հեռու քաղաք մը գնաց, կրպակ մը բացաւ, և հոն իւր քաղցր խոհեմ և գործունեայ բնաւորութեամբ յաճախորդներ շահելով, իւր դրամագլուխն աւելցուց և ուրիշ գործի մ'ալ ձեռք զարկաւ:

Այն ատեն դրեց իւր ծնողաց, որ իւր աղբակիցներէն այն որ քիչ շատ դրամ շահած է եւ կամ ունի, ելնէ իրեն գայ:

Անոնք ալ իւր հօրեղբօր որդին զրկեցին փոքրիկ դրամագլխով մը: Սերովքէ իւր հօրեղբօր որդւոյն յանձնեց իւր հին կրպակն, իրեն ընկեր ընելով, եւ նորա դրամագլխով ալ իր նոր գործն յառաջացուց եւ հետզհետէ իւր ազգակիցները հրաւիրեց, որպէս զի իրենց ունեցած դրամներն առնուն գան:

Սերովբէ ամենն ալ դործի վարժեցուց եւ
իրեն ընկեր ըրաւ, որք մեծապէս շահեցան, բայց
ինքն ամենէն աւելի վաստըկեցաւ, որովհետեւ
ամենուն հետ առանձին ընկեր լինելուն շահա-
բաժին կ'առնէր իւրաքանչիւրէն:

Սերովբէ կ'ըսէր ստէպ. Ինչ կը հասկնան այն
վաճառականք որոնք իրենց քով միշտ իրը ծառայ
կը պահեն աշխատաւոր անձինք՝ հինգ, տասը տա-
րի եւ բնաւ չեն կամիր որ անոնք ալ վաճառակա-
նական առանձին ճիւղերու մէջ յառաջանան եւ
այսպէս աշխատաւորներն քաջալերուին. զի հա-
ւատարիմ աշխատող մը, երբ տեսնէ որ իւր ա-
պագայն սահմանափակ է, եւ թէ ինք միշտ ծա-
ռայութեան տաժանելի լուծէն չպիտի ազատի,
անոնցմէ շատերը բնականաբար դոնէ քիչ հաւա-
տարիմ եւ քիչ աշխատասէր կ'ըլլան եւ այս կը
վնասէնախ վաճառականութեան եւ յետոյ իրենց:



ԱՆՑՈՐԴՔ ԵՒ ՇՈՒՆՔ

Երկու հոգի իրիկուան դէմ
Տեղ մը ելեր կ'երթային,
Ուր հարկաւոր բանի վրայ
Կը խօսէին մէջերնին:

Մէկ մ'ալ յանկարծ՝ հա՛ռ ըրաւ
Տան մը դրանը տակէն
Խոշոր շուն մը դուրս ցատկեց,
Վրայ վաղեց հաջելէն.

Միւսն անդիէն ձայն ձգեց,
Ետեւէն մէկն ալ ելաւ,
Որն ալ փողոցն էր պառկած,
Խսկոյն տեղէն վեր թռաւ.

Վերջապէս մէկ րոպէի մէջ
Այնքան շուն դուրս թափեցան,
Մանր ու խոշոր՝ որ շներով
Բոլոր ճամբան լըցուեցաւ:

Մարդկանց մէկուն կիրքն ելաւ,
Դարձաւ դէպ այն շներուն,
Վար ծռեցաւ որ առնու
Քար մը նետէ դլիսնուն:

«Թող տուր, եղբայր, բան չունի՞ս՝
Ըսաւ նորա ընկերը,
Մեղք չէ՞ ձեռքիդ՝ որ քարով
Վարես դու այդ լիբբերը.

Եռն ըսածդ խրատելուն
Ամենէն լաւ հնարքը,
Անոր երես շըտալն է.
Զը դիտես՝ շան բարքն ու վարքը» :

Իրաւ, հաղիւ տասը քայլ
Մարդիկն առաջ որ դնացին,
Շներն իրար նայելով՝
Զայներնին ալ կտրեցին:

Այսպիսի են ահաւասիկ
 Չարախօսներն ամեն տեղ,
 ինչ ալ տեսնեն լաւ ու նոր՝
 Պէտք է հաջեն ունայն տեղ:
 Դուն քու ճամբէդ անխոտոր՝
 Բրէ հանդարտ ըզբարին.
 Թող որ չները հաջեն,
 Հաջեն հաջեն՝ կը դադրին:



ԱՆՈՒԷՍՆ ՈՒ ԱՅԾԸ

Աղուէսին խորամանկութիւնը չգիտցող չկայ,
 եւ ամենքն ասոր հաւատացեր են, բայց մինակ
 այծն է մնացեր չհաւատացող:

Ամառուան մէջ խիստ տաք ատեն երբոր բո-
 լոր ակերն ու առուները ցամքեր էին, աղուէսին
 մէկն ի զուր չորս կողմ ինկեր խմելու ջուր կը
 վնտուէր. մինչեւ անդամ ադարակէ մը ներս մը-
 տաւ կամացուկ մը, բայց շունը տեսաւ հոն, ա-
 նոր համար աճապարանօք ձգեց փախաւ անկէ:

Վերջապէս միտքն եկաւ որ աղարակին մօտը
դաշտի մը մէջ տեղուանքը հին ջրհոր մը կար,
վազեց հոն գնաց, բայց նայեցաւ որ ջուրը շատ
վար էր:



Շատ աշխատեցաւ որ ջուրին հասնի. վերջա-
պէս գլորեցաւ, գլխի վայր ինկաւ ջրհորին մէջ:

Շատ վախցաւ, բայց շատ չվնասուեցաւ,
որովհետեւ ջուրը խորունկ չէր եւ ուղածին պէս
աղւոր մը խմեց:

Երբոր ծարաւն անցաւ, գուրս ելնել ուղեց,
բայց հորին բոլորտիքը պատի պէս շիտակ լինե-

լուն, ետեւի ոտքերուն վրայ ելնելով, կայնելով
իսկ՝ դարձեալ կէս ճամբան չէր հասներ հորին
բերանը մօտենալու, ուստի եւ հոն բանտարկեալ
մնաց:

Հետեւեալ առտուն այծ մը եկաւ եւ ջրին
մէջ աղուէսը տեսնելով հարցուց. «Չուրն աղէ՞կ է»:

«Մի հարցուներ», ըսաւ աղուէսը. «Ի՞նչ
կեցեր ես, վար իջիր. այնչափ աղէկ է որ չեմ
կրնար դիմանալ. կը խմեմ ու կը խմեմ, չեմ
կշտանար»:

Մէկէն վար նետուեցաւ երկայն մօրուքը,
բայց վար իջաւ չիջաւ, իսկոյն աղուէսն անոր
կռնակը ցատկեց եւ շուտ մը գուրս ելաւ. Ան-
գամ մ'որ հորին բերանը հասաւ. ետին դարձաւ
եւ ըսաւ. «Շնորհակալ եմ, մնաս բարով»:

Անմիտ այծը՝ շուտով հասկցաւ որ շատ խեն-
դութիւն է ըրեր ու խորամանկ աղուէսին հաւ-
տացեր է:

Մի՛ վստահիք անոնց՝ որոնց նենդաւոր եւ
անձնասէր ըլլալը ճանչցուած է.

ՏՂԱՑՆ ԵՒ ՍԱԼՈՐՆԵՐԸ

Մարդուն մեկը տակառ մը լեցուն սալոր գը-
լուխն առած՝ ծախելու կը տանէր. ճամբան քանի
մը հատ թափեցաւ գետինն ինկաւ:

Մարդը չտեսաւ թափիլը, և կը քալէր կ'եր-

թար . բայց տղայ մը տեսաւ սալորներուն թափիլը , եւ ժողվեց :


«Ինձ նայէ» , պոռաց մարդուն , մարդն ալ անոր ձայնը լսելով դարձաւ ետ , եւ կեցաւ . տղայն ալ բերաւ սալորներն անոր տուաւ :

Մարդը «Ճնորհակալ եմ» ըսաւ , սալորներն առաւ եւ սակառը գետինը գնելով «Հիմա հաւնածդ մէջէն առ» ըսաւ , «որովհետեւ պարկեշտ տղայ մ'ես դուն» :

Երբ մարդն ելաւ գնաց , տղայ մը եկաւ տըղուն քով եւ ըսաւ . «ինչո՞ւ սալորներուն ամենն ալ չպահեցիր . հիմա քանի մը հատ ալ ինձ կուտայիր» :

«Զէ՛ , չէ՛» պատասխանեց տղայն , «եթէ կ'ուղես այս սալորն ա՛ռ , որովհետեւ իմն է եւ կրնամ տալ . եթէ իմն չեղած բանն առնեմ կամ քեզի տամ , գողութիւն ըրած կ'ըլլամ , ուստի չեմ ուզեր որ լաւ անունս կոտրի» :





ԱՄԱՋ

Արսէն, Սմբատ, Արամ, Լեւոն, Հարապիկ,
Մաժակ, Տիգրան եւ Ատովմ դաշտը դացին հըն-
ձուած հասկերէն որայ (Տէմէք) կապելու:

Ամենքն ալ մեծ աշխուժիւ աշխատութեան
սկսան, բայց շուտով յոդնեցան եւ քրտնեցան:


Տիգրան պոռաց . «Ա՞հ , որչափ տաք է ամառը , տես , ինչպէս քրտնեցանք , երանի թէ ամառ չըլլար» :

Ամառ չըլլար , հարցուց Արսէն . այն ատեն ցորեն , գարի , գետնախնձոր , հաճար , վարսակ , եւայլն պիտի ունենայի՞նք որով մենք զմեղ եւ մեր անասունները կերակրէինք . անշուշտ ո՛չ , եւ եթէ այս տաքութիւնը չլինէր , պիտի կարենայի՞նք այն համեղ պտուղներն՝ այսինքն դեղձը , ծիրանը , սերկեւիլը , խնձորը , տանձը , սալրը , խաղողը , ձմերուկը , վարուղը , սեխը , կաղինը , շագանակը , ընկոյզը , թուղը , նուշը եւ այլն ժողովել :

Արամ եւ Լեւոն՝ որք այս խօսքերուն ուշադրութեամբ մտիկ կ'ընէին , միարերան գոչեցին : Եղբայր Արսէն , այդշափ պտուղներու անուններն ի՞նչպէս յիշեցիր , երանի՛ թէ հիմա մէկ քանի տեսակ պտուղ ըլլար , ուտէինք ու մոռնայինք տաքն ու տապը :

Լաւ է որ այժմ չունիմք , ըստ Արսէն . եթէ ունենայինք եւ այս արեւու սաստիկ ջերմութեան եւ այս յոգնած վիճակնուս մէջ ուտէինք , տարակոյս չկար թէ ամենքս ալ կը հիւանդանայինք . ինչպէս որ շատ տղայք , եւ տղայամիտ չափահաններ , ինչպէս ըստ հայրս , իրենց ախորժակին գերի կը լինին եւ գտած պտուղնին կ'ուտեն , առանց նկատելու ժամանակն եւ իրենց վիճակը , այսպէս պարապ տեղը շատ անդամ կը հիւանդանան եւ մինչեւ իսկ կը մեռնին :

Խոհեմ տղայք Արսէնի այս իմաստուն խը-
րատին հաւնեցան եւ տուն դառնալով իրենց
ծնողացը պատմեցին . անոնք ալ գովեցին Արսէնի
խելքը , եւ ըսին . — Մեծ մարդ է այն , երբ իւր
տղայութեան մէջ խոհեմութիւնը եւ բարւոյն հե-
տաքրքրութիւնը կը փայլեցնէ իրեն վրայ :



ԵՐԳ ԱՇՆԱՆ

Աշունը եկաւ , թափեցան տերեւք ,
Ալ մի' վնտոեր դու մանուշակ ու վարդ ,
Բնութիւնը տխուր , պարտէղը տրտում ,
Չմոռուայ հոգն է մարդոցը սրտում :

Երախան փակուած մինակ սենեկում ,
Պատուհանիցը պարտէղ է նայում ,
Միտքը բերում է գարնան օրերը ,
Մարդերի վրայ զուարթ խաղերը :

Մի' տրտմիր , տղայ , թող անցնի մարտը ,
Նորէն կը բացուի նարկիղն ու վարդը ,
Նորէն սոխակը պիտի գայ հանդէս ,
Նորէն խաղալու դու կ'երթաս պարտէղ :





ԱՇՈՒՆ

Պարոն Արսէն, այսօր ալ եթէ կարելի է ինձ
հետ ընկերացիր, ըստ Գրիգոր, երթամք պտոյտ
մը ընեմք դաշտերը, պարտէզները, տեսնեմք
լոնչ կայ:

Եատ լաւ, պատասխանեց Արսէն, բայց Տիգրանն
ալ միասին առնումք:

Ուրախութեամիւ դոչեց Գրիգոր, Տիգրան
լաւ տղայ մ'է եւ իմ ալ բարեկամն է. այս ըսե-

լով՝ Տիգրանն իրենց ընկեր առին ու դէպի
դաշտը մեկնեցան :

Տիգրան տեսնելով որ դաշտ կ'երթան, Ար-
մենին դառնալով զարմացմամբ հարցուց. բարե-
կամ, ո՞ւր կ'երթամք, դաշտը հնձուած ցորենի
հասկեր չկան որ որայ կապեմք, դոնէ պարտէզ
մը երթամք եւ քիչ մը զբօնումք :

Երկու ընկեր համամտեցան Տիգրանին եւ
պարտէզ մը գացին, ուր գետինը ծածկուած
տեսան ծառերու գեղնած տերեւներով որ իրենց
աչքին լաւ տեսարան մը չէր ընծայեր, եւ ցուրտ
մեղմ հով մը մեծ շնկոց հանելով անհամար տե-
րեւներ գետինը կը թափէր :

Ի՞նչ դէշ եղանակ է, գոչեց Տիգրան, քիչ մը
ցուրտ եւ մեղմ հով մը, ծառերն իրենց զար-
դարանքէն զրկեր է :

Է՞՞, եղբայր Տիգրան, դու ալ ցուրտին, տա-
քին, հովին մէյմէկ պատճառ կը գտնես, միթէ
ամառն, այսչափ եւ ասկից սաստիկ հով եւ աշ-
նան ոկիզբներն ասկից աւելի զով չէ՞ր եղած,
ինչո՞ւ այն ատեն տերեւները չէին թափեր, ար-
դեօք զիտե՞ս պատճառը, որովհետեւ ծառերն
այն ատեն իրենց պարտքը չէին կատարած, ի-
րենց պտուղը չէին տուած եւ մենք դեռ պէտք
ունէինք անոնց շուքերուն :

Այն տերեւներն, որ պտուղներն արեւու
սաստիկ ջերմութենէն ծածկելու պաշտօն ու-
նէին, հիմայ լրացուցած են եւ ծառերն ալ ա-
նոնց ջուր տալէ դադրած, ուստի անոնք եւս


դեղնելով գետին կ'իյնան եւ հողը կը պարար-
տացնեն :

Այսպէս ծառերը կը մերկանան իրենց զար-
դարանքներէն հանդստանալու եւ գարնան նորէն
ծաղկելու , ինչպէս մենք կը հանեմք մեր հա-
գուստներն եւ կը քնանամք վաղը նորէն աշխա-
տելու համար , իսկ զով հովս եւ ծառերու այս
վիճակը , կ'իմացնեն մեզ թէ ձմեռը մօտ է :

Դաստիարակս ըստւ թէ՝ Աշնան երկրագործք
ցորենը կը կասեն եւ ջաղացպանին տանելով
ալիւր կը շինեն , գարին , հաճարը , վարսակը ,
եղիպտացորենը , գետնախնձորը շտեմարանները
կը լեցունեն , եւ ձմեռուան պաշար կ'ընեն , այ-
դեկութք կը վերջանան , ինչպէս անցեալ կիրակի
եղբօրս Ալպրիկի հետ գնացինք այդիները եւ
տեսանք այն զբօսալի աշխատութիւնը եւ կանանց
գինի շինելու պատրաստութիւնը :

Եղբայր Արսէն , պատասխանեց Գրիգոր , ե-
րանի թէ այս եղանակին մէջ եւս պտուղներ
հասնէին եւ մենք եւս պարտիզպանէն մի քանի
տեսակ ծախու առնէինք եւ ուտէինք :

Այս եղանակին մէջ ստուգիւ նուռ , զղեար ,
ձիթապտուղ , պիստակ , Նարինջ կը հասնի , բայց
այս պարտիզին մէջ այն տեսակ պտղոց ծառե-
րէն չկայ , բայց տունը չորցուցած պտուղներ ու-
նիմք . կ'երթամք կ'ուտեմք , պատասխանեց Ար-
սէն , եւ ամենքն ի միասին մեկնեցան պարտի-
զէն , ուրախ զուարթ երգելով :



ՉՄԵՌ

Որչափ ուրախ կը լինին դաստիարակք, երբ
տեսնեն որ իրենց աշակեթներն իրարու հետ
համաձայնութեամբ ուրախ զուարժ կը խաղան
եւ որչափ գոհ կը լլան ծնողք, երբ իրենց որ-
դեքը կը տեսնեն թէ՝ չար տղայոց հետ ընկեր
եղած չեն :

Օր մը Արսէն , Ալպրիկ , Արամ , Լեւոն , Տիգրան , Միհրան , Գրիգոր , Սմբատ , Հարողիկ , Մաժակ , Սարգիս եւ Յարութիւն իրենց դրացի ընկերներովն ի միասին դացին եւ մօտակայ բլուրի վրայ ելան , անոնց հետ էր նաև Աշխէն պէպէֆովն :

Օդը շատ ցուրտ էր , ջուրերը սառած եւ գետինը ձիւնով ձածկուած , բայց ամենքն ալ ուրախ էին , որովհետեւ դիտէին թէ Արսէն երբ իրենց հետ էր , լաւ զրօսանք մը պիտի դանէր :



Արսէն երբ բլուրին վրայ ելաւ , դարձաւ իր ընկերներուն ըստաւ . Տեսէ՞ք մեր տուներն այս տեղէն կ'երեւին , ուստի եկէ՞ք ձիւնէ պահապան մը շինեմք , դաղաններն ալ վախցնեմք :

0'ն , դուք ձիւն ժողվեցէք , եղբարք , եւ ես ալ պէտք եղած ձեւը տամ' :

Ամենքն սկսան աշխատիլ մեծ ջանքով եւ Արսէն կարողացաւ հսկայ մարդու մը կերպարանք տայ , այնպէս որ բոլոր ընկերներն սկսան ուրախութեան աղաղակիներ արձակել , եւ անոնցմէ միոյն առաջարկութեամբ ձեռքը դաւազան մը տուին , եւ կուրծքքն վրայ գրեցին , ԱՀՅ. ԳիւղիՍ ՊՈՀՅՈՒՆԲ :

Երբ ուրախութեամբ իրենց աշխատութեան արդիւնքը կը դիմէին , մէյ մ'ալ ձիւն սկսաւ դալ , այնպէս սաստիկ , որ ամենքն սկսան դըժ-դոհիլ :

Սակայն որչափ մխիթարուեցան , երբ Արսէն նկատել տուաւ իրենց թէ՝ տուներնին խիստ մօտ է եւ երջանիկ պէտք է համարուին այն ճանապարհորդէն որ մի շուն ընկեր առած խիստ հեռուէն կուգայ :

Տիգրան , որ ստէպ հարցումներ կ'ընէր Արսէնի , ցուցնելով ճամբորդք , հարցուց խնդալով . եղբայր Արսէն , սա ձմեռն ալ գովէ , տե՛ս , բոլոր երկիրը սպիտակ սաւանով ծածկուած է եւ ճամբորդք ձիւնէն պիտի խղդուի :

Ե՞ն , ինչո՞ւ չգովեմ , եղբայր , աշնան գետինը ծածկող տերեւներն ո՞վ պիտի փտտեցնէ

եւ գարնան գեղեցկութիւնը ո՞վ պիտի պատրաստէ , անշուշտ այս ձիւնն որ մեղ վսաս չունի , դալով ճամբորդին , անշուշտ նա գիտէ թէ ձըմեռը կուգայ . հետեւաբար լաւ մը պատսպարուած է : Իսկ եթէ մենք կը մնիմք , տաքնալու համար պէտք է կամ խաղամք և կամ վազեմք . և եթէ այսպէս չտաքնամք , կրակը շուտով կը տաքցնէ զմեղ : Տիգրանին պատասխանին չսպասեցին ընկերներն եւ «Տիշդ է , Տիշդ» պոռալով ամենքն ի միասին վազելով տուն դարձան , եւ ձիւնը դադրելէ վերջն , սահնակ խաղալ սկսան :

Զ Ի Ւ Ն

Երբ որ ձիւն կուգայ , ես կ'ուրախանամ ,
Որ գուրս պիտ' ենեմ , սահնակ պիտ' խաղամ ,
Բայց տեղս ո՛րքան աղքատ տղայք կան ,
Որ տաք հագուստի կարօտ կը մնան :



Զ Մ Ե Ռ

Զը գիտեմ՝ ինչո՞ւ ձմեռուայ օրը
Կը յիշեմ ես միշտ Հայ եղբօրը,
Կըսեմ թէ, արդեօք չունի՞ նա կարիք (պէսֆ)
Հաց, միս, եղ ու փայտ ունի՞ նա հերիք:

Ունի՞ տաք հալաւ, ունի՞ նա մուշտակ.
Ամո՞ւը է տունը, կտուրը չէ՞ ծակ...
Ու այսպէս ես միշտ ձմեռուայ օրը
Միտքս կը բերեմ իմ Հայ եղբօրը:





ԳԱՐՈՒՆ

Ծառերը ծաղկել սկսած են, թռչնիկները երգել, ծիծեռնիկը եւ արագիլը նորէն կ'երեւին իրենց բոյներուն մօտ :

Օդը պարզ եւ մաքուր է. մարգագետինը ամբողջ կանաչ և կարմիր, դեղին, ճերմակ ծաղիկներ կը զարդարեն գետինը. Ոսկեփայլ մեղուներ բըզզալով ծաղիկներէն մեղք կը քաղեն. իսկ երկրագործը կը հերկէ երկիրը եւ պարտիղպանը պըտղատու ծառերը արմատախիլ կ'ընէ, ամառը արդիւնք առնելու յուսով :


Դաստիարակները եւ ձեր ծնողքն նոյնպէս
կ'աշխատին ձեղ համար, որպէս զի ապագային
օդտակար լինիք եւ պտղատու ծառոց կամ բա-
րեբեր երկրի նման արդիւնք տաք:

Որովհետեւ դուք տղայ էք դեռ, ձեր արդի
տարիքը ձեր կենաց գարունն է, հիմայ կրնաք
մշակել ձեր միտքը եւ շատ օդուտ քաղել, երբ
աշխատիք պատրաստել ձեր դասերը:

~~Կարօտ~~ ենք տեսքիդ, աննըման գարուն,
Շուտ արի մեղի, բե՛ր ծաղիկ սիրուն.
Բե՛ր պայծառ արեւ, բե՛ր մեղ տաք օրեր,
Ճըռւողող թռչուն, բե՛ր կանանչ դաշտեր:

Բա՛ց մեր դռներն, բա՛ց մեր պատուհան,
Թո՛ղ բայցուին ծաղկին, մեխակ եւ շուշան.
Փակուած սենեակին ելնեմք, ազատուինք,
Կանանչ դաշտ երթանք, խաղանք գլորուինք:





ԱՐԵՒ

Ժրադլուխ գիւղացին. Մարիամ իւր զաւակ-ներով կը վերադառնար արտէն, ուր անսոնց հետ աշխատած էր ամբողջ օրը :

Մութ էր, տուն հասան եւ շատ զարմացան, երբ սենեակին մէջ գտնուած կանթեղը վառուած տեսան :

Տղաքներն ապշած իրարու երես նայեցան եւ անօնցմէ մէկը, Սահակ, պոռաց .

Այս ի՞նչ է, տունը մարդ չ'կար, ո՞վ վառեց այս կանթեղը :

Եղբայրն պատասխանեց, Հայրերնիս վառած լինելու է :

Ո՛չ, ըստ Սահակ, Հայրերնիս դեռ արտն էր, երբ մենք ճանապարհ ելանք :

Մայրերնին տեսնելով զաւակաց շփոթութիւնը, ըստ Տղաքս, կ'երեւի թէ ձեր հայրը շուտաքայլ եկած եւ մեզմէ առաջ տուն հասնելով, կանթեղը վառած է. վեր ելէ՛ք, տեսէ՛ք, թերեւս ինքն ալ սենեակին մէջ նստած է :

Սահակ եւ Յակոբ երկու եղբայր վեր վաղեցին եւ տեսան թէ Հայրերնին նստած էր սենեկին մէջ :

Յակոբ ուրախութեամբ պատմեց իր հօրը թէ՝ ինչպէս զարմացեր էրն կանթեղին վառուած լինելուն, եւ որչափ շփոթած պիտի մնային, երբ մայրերնին չըսեր թէ՝ Հայրերնիդ արդէն շուտաքայլ դարձած եւ վառած է զայն :

Հայրն ըստ, տղաքս, երբ դուք եւս լաւ մտածել սովորիք, այն ատեն ամեն բանի պատճառը շուտով կրնաք դիտնալ :

Երկրորդ օրը՝ Հայրը, մայրը եւ տղայքն դաշտը դացին հնձած ու չորցած խոտերը դի-

զելու : Արեւը երկնից կամարին վրայ կը փայլէր եւ տղայք ուրախ զուարթ կ'աշխատէին :

Արդեակ իմ, ըստ հայրերնին, երէկ կարող եղաք համոզուիլ կամ գանել թէ՝ ես էի սենեկին մէջ դրուած կանթեղը վառողն : Արդ կընաք գիտնալ թէ՝ ո՞վ է մեր վրայ ծագած լցոր վառողը :

Այո՛, պատասխանեց Յակոբ, քիչ մը մտածելէ վերջ . Աստուած է զայն վառողը, փոքրիկ կանթեղ մը ինքնին չվառիր, ուր մնաց պայծառարեւը, ուրեմն զինքն եւս վառող մը կայ :

Ճշմարիտ է . հայրիկ, աւելցուց Սահակ . ամեն բանի արարիչն Աստուած է . զոր օրինակ Արեւը, Լուսինը, աստղերը, խոտերը, ծաղիկներն, ծառերը, մէկ խօսքով, ինչ որ կը տեսնեմք եւ չեմք տեսնել :

Ապրիք, տղաքներս, ուրախ եմ որ լաւ կը խորհիք եւ կը ճանչնաք թէ՝ Աստուած է ամեն բանի արարիչը : Ուստի պէտք է միշտ չնորհակալ լինիմք իրեն եւ օրհնեմք զինքն . ալօթեմք որ մեր աշխատութիւններն արդիւնաւոր ընէ, դիտէք եւ կը տեսնէք թէ՝ մենք ցորեն գարի, վարսակ կը ցանեմք, բայց չեմք կընար բուացունել . այսպէս ալ մարդիկ շատ բաներ կը շինեն, բայց չեն կընար ճանճ մը անդամ ստեղծել .



III. L, U, V, W,

C, U, N, M, W, N

F, Q, Y, P, R, W,

T, G, V, C, E, Z,

E, Z, J, g, b, l, J,

J, h, S, i, t, u, ü,

þ, þ, y, ð, ð, f, ð,

գրաստան մարզական

հաստիքական 1805

Ա ՅԵՐԵՎԱՆ

ՄԱՔՈՒՐ ԳԻՐ ԳՐԵԼ

ինչպէս կրնամ մաքուր գիր գրել կըսէր
Հարպիկ իւր մօրեղբօրը Միհրդատին :

— Շատ դիւրին է պատասխանեց Միհրդատ .
գիրերը կը կազմուին գիծերէ , երբ դու լաւ գիծ
քաշես այնպէս որ ամենքն մէկ չափով լինին
այսինքն ոչ մէկը մէծ եւ ոչ միւսը փոքր լինին եւ
կամ մին մէկ կողմ ծռուած եւ միւսը հակառակ
կողմ . այլ ինչպէս օրինակին մէջ կը տեսնես ,
այնպէս գծել կարողանաս 4—5 երես . գիտցիր
որ պիտի կարենաս բոլոր գրերն գրուածին պէս
օրինակել :


Բայց սիրելի հօրեղբայր իմ , յաւելցուց
Հարպիկ , յետոյ պիտի կրնամ օրինակին դուրս
ուզածս գրել իմ սիրելի մայրիկիս :

— Ոչ միայն մայրիկիդ ուղածդ պիտի գրես ,
հապա նաեւ քո յարգոյ գաստիարակիդ տուած
բոլոր գասերն ալ գեղեցիկ տառերով պիտի
կրնաս պատրաստել :

Այն օրէն Հարպիկ սկսաւ ամեն ջանք ի գործ
դնել միակերպ գիծ քաշել եւ երբ տեսաւ որ
ալ գժուարութիւն չը կրեր գծելու օրինակին
պէս , ոկսաւ գրերն օրինակել եւ մինչեւ որ օրի-
նակին ճիշդ նմանը չը լինէր ուրիշ գիր չէր
գրեր . ահա այսպէս կրցաւ , այնպէս գեղեցիկ

գրել որ տեսնողք չէին հաւատար թէ փոքրիկ Հարպիկն գրած լինի այդ գրերն , որովհետեւ իւր գրի տետրերն ալ խիստ մաքուր կը պահէր . զի գրողի մը առաջին պարտքն է իւր տետրակի մաքրութիւնը :

Զկայ մի գործ , որ յարատեւ աշխատանքն կարող չը լինի յաղթել անոր :



ՄԱՅՐԻԿԱ

Ով՝ կերակրեց զիս՝ տալով ծիծ անուշ ,
Ով առաւ իւր գիրկն որ ննջեմ մուշ մուշ ,
Իմ վարդ երեսիս ծաղիկներ թափեց .

Մայրիկս :

Երբ իմ աչերէս փախաւ քուն դնաց ,
Ո՞վ ինձ անուշիկ օրօրներ ասաց ,
Եւ թեւերուն մէջ օրեց որ չըլամ .

Մայրիկո :

Ո՞վ նստաւ հսկեց իմ մատաղ գլխուն ,
Երբ մէջ որրանիս ննջէի սիրուն ,
Եւ սիրոյ քաղցրիկ արտասունք թափեց .

Մայրիկո :

Երբ կծու ցաւով կուլայի ես միշտ ,
Ո՞վ իմ աչք սրբեց , թեթեւցուց իմ վիշտ ,
Ահ ու դող զգաց որ ես չմեռնիմ .

Մայրիկո :

Ո՞վ վաղեց օգնել , երբ ես ընկայ վար ,
Եւ պատմեց ինձ վէպ որ լինի ինձ ճար ,
Պագաւ ցաւած տեղն որ տանի դարման .

Մայրիկո :

Ո՞վ աղօթք ուսոյց իմ բերնիս քնքուշ ,
Որ պաշտեմ զԱստուած լինիմ միշտ զգոյշ ,
Եւ խելքով չնորհքով իմ կեանք անցունեմ .

Մայրիկո :

Եւ կրնա՞մ երբէք մոռնալ քեզ , հոգիս ,
Դու որ սիրեցիր եւ հոգացիր զիս ,
Եւ այնչափ ցաւեր առ ոչինչ դրիր .

Մայրիկո :

Ո՞հ , այդպիսի բան մտքէս չի անցնիր ,
եւ դու ո՛ Ասաուած , իմ արեւ պահիր ,
Յուսամ վարձատրել քու անբաւ հոգեր .

Մայրիկս :

Իսկ երբ դառնաս դու , տկար , պառաւուկ
իմ հզօր բազուկ քեզ լինի նեցուկ ,
եւ պիտի սփոփեմ բոլոր քու ցաւեր .

Մայրիկս :

Եւ երբոր տեսնեմ որ գլուխդ ծոի ,
Ես պիտի հսկեմ մօտ քո սնարի ,
Եւ սրտիս խորէն պիտ՝ արցունք թափեմ .

Մայրիկս :

ԱՌԱԾՆԵՐ

Մուլութիւնն եւ անգործութիւնն աղքատու-
թեան դռներն են :

Մարդս չգիտցածը հարցունելու պէտք չէ
ամաչէ :

Դժուարին բան չկայ , որում կարող չլինի
յաղթել յարատեւ աշխատանքը :

Գէշ վէրքը կ'առողջանայ , գէշ համբաւը չը
շտկուիր :

Ամեն տեսակ վէճ եւ կոիւ վաղուան թող
եւ շահով կ'աղատիս :

Ուրիշներուն ամեն բան ներէ , իսկ քեզ՝ եւ
ոչ մի բան :

Ուրիշներուն քաշածը դիտէ , քննէ , եւ քեզ
թեթեւ կ'երեւնայ քուկինդ :

Տգիտութիւնը ամօթ չէ . տգէտ մնալն է ա-
մօթ . գիրք կարդա՛ , ուսիր եւ տգէտ չես մնար :

Չար ընկերներ սիրողն ինքն ալ չար կը լինի :

Բարի ընկեր մը մարդուս մեծ գանձ է :

Բարի անունը , շատ անգամ , մարդու նեղու-
թիւններէ կ'աղատէ :

Գէշ խօսքերը սուր դանակէն աւելի սիրտ
կը ցաւցնեն :

Համբերութիւնը անանկ ծառ մ'է՝ որուն
արմատը թէպէտ լեզի , բայց պտուղը շատ քաղ-
ցըր է :

Ով որ քիչով դոհ կը լինի , նա երջանիկ կը
համարուի :

Հարուստ է այն մարդը , որ աղէկ բարեկամ-
ներ ունի :

Զանչցած մարդուդ հետ ընտանեբար մի
վարուիր :

Գիտուն կը սեպուի այն մարդը , որ իմաս-
տուն ըլլալու համար կ'աշխատի միշտ , բայց երբ
կ'ըսէ թէ եղայ , յիմար կը համարուի :

Անխելք է այն մարդը որ ուրիշի ըրած փոր-
ձերէն խելք չը սովորիր :

Աւելորդ բան ծախու առնողը , շուտով պէտք
եղածն կը վաճառէ :

Հարուստ է այն մարդն որ պարտք չունի :

Պատիւը բոլոր հարստութիւններէ մեծ է :
 Ժամանակը դրամ՝ է :
 Կորսուած ժամանակն՝ ալ չ'վերադառնար :
 Բուն աղքատութիւնը՝ տպիտութիւնն է :
 Բան չգիտցողը գիտցողին գերին է :
 Անոնք որ միաբան չեն, իրենց թշնամինե-
 րուն գերին կը լինին :
 Առանց նեղութիւն կրելու աղէկ բան չը
 կրնար՝ ըլլալ .
 Բարի եղողը միայն սիրել գիտէ :

Ծանօթ . — Իբր շտրունակութիւն զրօնարանիս ,
 հրատարակուած է ԱՍԿԵՄԱՏԵՆԻԿ ՀԱՅ ՏՂԱՅՈՑ
 անուամբ գիրք մը , իր տեսակին մէջ բոլորովին նոր ,
 եւ որ վեց ամսոյ մէջ կրկին տպագրութեան արժա-
 նացած է :



Վ Ե Ր Զ

БИБЛИОТЕКА

ГЛАВНОЕ УЧЕБНОЕ КЛЮЧЕВОЕ

СОСТАВНОЕ ИНСТИТУТСКОЕ

ПЕЧАТЬ ГОДОВАЯ

XV 38.41/52.71

ՀՀ Ազգային գրադարան



NL0585458



Գիւն 2 ԴԱՀԵԿԱՆ

ՎԱԻԵՐԱՑԵԱԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈԴՈՅ
ԱԶԴ. ԿԵԴ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

մարֆ նօտար հլելամի րխծնի թիւ առնշան

ՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԱՐԵԱՆ